№ 223 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 223

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Նոյեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 3 ռուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ
Այսօր, չորեքշաբթի, հոկտեմբերի 12-ին,
Հայոց Դր. Ընկ. Թատերասէրների խումբը
Մասնակցութեամբ դերասանների
կը ներկայացնէ
առաջին անգամ Ժողովրդ. բեմի վրա
ՉԱՐԱԳՈՒՇԱԿ ԲԱՅԼ
Դրամա 3 գործ. հեղ. Կարէեվի, թարգ.
Մ. Աւալեանի
ՍԻՒՐՊՐԻԶ
Վօդ. 1 գործ., հեղ. Արաքսեանի
Մասնակցում են.—տ. տ. Դուրեան-Արմէնեան, Մամիկոնեան, Մանուչարեան, Մարգարիտ, Վիրժինէ, օր. Ղազարեան, պ. պ. Ամօ-Խարազեան, Արմէնեան, Թաշճեան, Հայկազեան, Փիրումեան և ուրիշները:
Սկիզբն է ճիշդ ժամը 8½-ին երեկ.
Ռեժիսսեր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
Հերթ. կարգադրիչ՝ Մ. ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆ
(տ.) 993. 1—1

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Կ.Հ.Բ. ԸՆԿ. 30-ԱՄԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
Գինն է 1 ռուբլի: Ճանապարհածախսը գնողի վրա: Դիմել Ընկ. գրասենեակը՝ Абасъ-Абадская ул., д. с., № 7.
տ. (չ.) 980. 2—2

ԽԱՂԱՂԱՍԷՐՆԵՐԸ ԵՒ ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Այս տարի սեպտեմբերի 13-ին նշանակված էր Խաղաղութեան Համաշխարհային XIX կոնգրէսը, որ չը կարողացաւ, սակայն, կայանալ Իտալիայի կողմից Թիւրքիային յայտարարված պատերազմի պատճառով:

Ինչպէս և պէտք էր սպասել, խաղաղասէրները բողոք բարձրացրին ներկայ Թիւրք-իտալական պատերազմի դէմ, համարելով այդ կոպիտ խախտումն այն սկզբունքների, որ 41 մեծ և փոքր պետութիւններ ընդունեցին Լա-Հայի կոնֆերէնցիայի մէջ:

Այդ պատճառով և խաղաղասէրները շատ տեղերում բողոքի միտինգներ կազմակերպեցին. այդ բողոքները ձևակերպվեցին նորերս Լոնդոնում կայացած մի միտինգում, ուր դուրս բերած որոշման յարեցին ոչ միայն բազմաթիւ խաղաղասիրական ընկերութիւններ, այլ և սոցիալիստական, եկեղեցական, սօցիալական, հասարակական, կրթական և գրական կազմակերպութիւններ:

Որոշման մէջ ասված է.

«Ներկայ միտինգը ներկայացնում է այն անձանց, որոնք, ամեն մի երկրում, նկատում են Լա-Հայի դատարանը իբրև տաճար արդարադատութեան, իբրև ամրոց իրաւունքի և իբրև պալլադիում խաղաղութեան, ուստի և նա արտայայտում է իր ապշութիւնը և զայրոյթը այն մասին, որ Լա-Հայի դաշնագիրը ստորագրող պետութիւններից երկուսը՝ Իտալիան և Թիւրքիան զէնքի դիմեցին, առանց որ այդ դաշնագիրը ստորագրող 41 պետութիւններից մինը յիշեցնէր նրանց Լա-Հայի դատարանի գոյութիւնը, մի պարտականութիւն, որ նրանք պարտաւոր էին կատարել այդ դաշնագրի համաձայն: Աշխարհիս կազմակերպեալ կառավարութիւնները զլացած լինելով իրանց այդ պարտականութեան մէջ, անհրաժեշտ է, որ անմիջապէս մի կոչ ուղղվի այն ազգերին, որոնց ներկայացուցիչներն են այդ կառավարութիւնները, յիշեցնելու համար աշխարհին Լա-Հայի դատարանի գոյութիւնը և պնդելու համար, որ ներկայ վէճը Իտալիայի և Թիւրքիայի միջև ենթարկվի Լա-Հային և լուծվի արդարադատութեան և իրաւունքի սկզբունքների համաձայն»:

Անշուշտ, խաղաղասէրների ջանքերը, բղխելով ազնիւ և վեհանձն դրդումներից, արժանի են ամենայն գովասանքի. բայց դժուար թէ նրանք կարողանան գործնական նշանակութիւն ունենալ, քանի որ կռիւը երկու երկրների միջև արդէն շատ առաջ է գնացել, քանի որ Թիւրքիայում պատերազմասիրական տրամադրութիւնը օրէ-օր սաստկանում է և Իտալիան էլ հակված չէ որևէ զիջումն անել:

Շատ տեսակէտներից Իտալիայի վարմունքը պախարակելի է, բայց կան և շատ փաստեր յօգուտ Իտալիայի: Նա իր առաջն ունէր Անգլիայի, Աւստրիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Սպանիայի օրինակները, երբ առաջինը գրաւեց Եգիպտոսը, երկրորդը՝ Բօսնիա-Հերցեգովինան, վերջինները՝ Մարոկկօն, Թունիզը, և նոյն իսկ Եապոնիան, որ գրաւեց Կորէան: Այդ առաջին: Երկրորդ՝ Թիւրքիան ինքն էլ յանցաւոր է իր յոռի կառավարութեան, իր անտարբերութեան և այն արհամարհանքի համար, որով նա վերաբերվում էր շարունակ իտալական կառավարութեան բողոքներին, պահանջներին:

Այնուամենայնիւ խաղաղասէրները չը պէտք է վհատվեն և նրանք պարտաւոր են անդադար գործել, որովհետև ներկայումս խնդիրը ոչ միայն Իտալիայի և Թիւրքիայի միջև մղվող պատերազմի դադարեցումն է, այլ և այն մեծ երկիւղը, որ այդ պատերազմը լայն ծաւալ չը ստանայ և չը դառնայ համաեւրոպական պատերազմ, համամարդկային աղէտ:

Հ. Առաքելեան

ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 հոկտեմբերի

Տրիպօլիս.—Երէկ առաւօտ երկու գումարտակ դիմեց դէպի հարաւարևմուտք հետախուզութիւն կատարելու, և վեց վերստ հեռաւորութեան վրա կրակ բացեց թշնամու վրա, որ արձագանք չը տուեց կաւին: Քաղաքի մօտ կանգնած են 10 աէրոպլան: Ամեն մի հետևակ գունդ ունի Մաքսիմի գնդակացիր:

—

Հռոմ.—Ստեֆանիին հեռագրում են. «Տրիպօլիսից հաղորդում են ռադիոհեռագրով, որ Դէրնան գրաւված է իտալացիներից. գերի են ընկել թիւրք մի կապիտան և 7 նաւաստի: Տրիպօլիսի եպիսկոպոսը հպատակութիւն յայտնեց գեներալ Կանէվային: Կտրականապէս հերքվում է Կ. Պոլսից ուղարկված այն տեղեկութիւնը, իբր իտալացիք պարտութիւն են կրել Բէնգազի մօտերը»:

—

Հռոմ.—Բէնգազից հաղորդում են, որ Թիւրքաց զօրքերը անկարգ յետ քաշվեցին երկրի ներսը: Բէդուինները սկսել են գիշերը յարձակումներ գործել: Իտալիայի դրութիւնը շարունակ լաւանում է: Քաղաքի բնակիչները զինաթափ են արվում: Տեղացիների պարագլուխները մէջ առ մէջ հպատակութիւն են յայտնում: Եկան երեք շոգենաւ զօրքերով: Զօրքերի ափ իջնելը կատարվում է արագ:

—

Կ. Պոլիս.—«Ենի-Գազէթան» հաղորդում է, որ 3000 հոգուց բաղկացած իտալական մի զօրամաս պարտութիւն է կրել Բարկի մօտերը, կորցնելով 800 սպանված և վիրաւոր: Թիւրքերի կորուստներն են 105 սպանված:

ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 հոկտեմբերի

Պեկին.—Բացվեց սահմանադրական պալատի երկրորդ նստաշրջանը: Իշխան Լին կարդաց գահական ճառը, որ համանիշ է հոկտ. 9-ի հրովարտակին: Ներկայ էին կաբինէտի անդամները և 100 պատգամաւոր ընդհանուր 196 թւից:

Հիմնվում է պաշտօնական նոր լրագիր «Սահմանադրական Պալատի Տեղեկաբեր» անունով:

Ծովակալ Սայի նաւատորմի երեք նաւեր եկան Զունխիան: Ինչանի գլխաւոր զօրաբանակը գտնվում է Գուանում, Խանկոուից 100 վերստ հեռաւորութեան վրա:

Հոկտ. 5-ին Խանկոուի մօտերը տեղի ունեցած ճակատամարտում հիւսիսային զօրքերը անկարող եղան մասնակցել: Ժուչոնը յամառ կերպով պահանջում է շտապել ուղարկել Խանչիկային, գանգատվում է հեծելազօրի քչութեան, ռազմամթերքի և փողի պակասութեան դէմ: Մի քանի օտարազգի օֆիցեր և «Թայմսի» թղթակիցը փորձեցին անցնել Խանկոու, բայց թոյլտւութիւն չը ստանալով վերադարձան Պեկին: Պաշտօնապէս հաստատվում է, որ Ուչանը ընկել է ապստամբների ձեռքը:

—

Բերլին.—Գերմանական նաւատորմի հրամանատարը պաշտօնապէս հաղորդում է Խանկոուից, որ լոյս սեպտեմբերի 30-ի գիշերը չինական խուժանը ներս խուժեց գերմանական գաղութը կողոպտելու համար, բայց «Ֆատերլանդ» նաւի նաւաստիները յետ մղեցին նրանց: Հրացէն չը գործադրվեց: Օտարազգիների դրութիւնը լաւ է:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 հոկտեմբերի

Պետերբուրգ.—Երէկ քաղաքային դումայում, բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ, կայացաւ երեկոյթ ի յիշատակ Ստոլիպինի: Ճառեր արտասանեցին Դումայի անդամներ Վլադիմիր Բոբրինսկին, Բաշմակովը, հոկտեմբերեան Նիկանորովը և այլք: Հռետորները ուրուագծեցին Ստոլիպինի խոշոր անձնաւորութիւնը, նրա հայրենասիրութիւնը, հռետորական տաղանդը: Առանձնապէս աջողութիւն ունեցաւ Նիկանորովի ճառը, որին հասարակութիւնը բերկրանքով ողջունեց:

Արտասահմանից վերադարձան Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչը և Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնան:

Հռոմից ստացված մասնաւոր տեղեկութիւնների համաձայն, իտալական կառավարութիւնը հրամայել է փակել փարոսները Կարմիր ծովում, չը սպասելով Կարմիր ծովը պատերազմական գործողութիւնների շրջանից հանելու հարցի լուծման:

Պաշտօնապէս հերքվում են Տրուսէվիչի լիազօրութիւնները կարճելու լուրերը, նաև նրա քննութիւնների հետևանքների և ընթացքի մասին լրագիրների տուած տեղեկութիւնները:

Պետական կօնտրօլեօրը Բարձրագոյնս նշանակվեց մինիստրների խորհրդի նախագահի անձնափոխանորդ վերջինիս հիւանդութեան ու բացակայութեան դէպքում:

Կամերհէր Պլեվէն հաստատվեց մինիստրների խորհրդի գործերի կառավարչի պաշտօնում:

—

Պարիզ.—«Թանը» «Ռուսական բիւջէն և հասարակական կարծիքը» յօդուածով վկայում է, որ քաղաքական շրջանների վերաբերմունքը դէպի 1912 թւի բիւջէն նպաստաւոր է. ընդգծում է սովորական եկամուտների բնական զգալի աճումը. եւլամուտը կազմված է անդեֆիցիտ: Լրագիրը յարակցում է, որ Կոկովցեվը գիտակցում է ազգային պաշտպանութեան բովանդակ կարևորութիւնը:

—

Թէհրան.—Մէջլիսը ընդունեց նոր ընտրողական օրէնքը, որով պատգամաւորների թիւը հասնում է 136-ի: Ընտրողական ձայնի իրաւունք ունի ամեն մի 21 տարեկան պարսիկ քաղաքացի: Ընտրութիւնների սիստեմը ուղղակի է:

Եփրեմը վերադարձաւ Թէհրան:

—

Կ. Պոլիս.—«Իկդամը» տպագրել է Միացեալ-Պետութիւնների հաւատարմատարի յայտարարութիւնը՝ թէ ամերիկեան նաւատորմը գտնվում է Ջիբրալտարում և վերադառնում է Ամերիկա:

«Թանինը» քննում է Ռուսաստանի հետ համաձայնութիւն կապելու հնարաւորութիւնը:

«Թանինի» մէջ հրատարակված է «Մ. և Ա.» կոմիտէի ծրագիրը. ամեն մի 20 տարեկան օսմանցի վայելում է ընտրողական իրաւունք. բոլոր դաւանութիւնները հաւասար են օրէնքի առաջ. պարլամենտը գումարվում է ամեն տարի չորս ամսով. նստաշրջանի ժամանակի փոփոխութիւնը կախված է սուլթանից. պատգամաւորների ռոճիկները աւելացվելու են:

Կալանաւորվեց և բանտարկվեց մի շաբաթ առաջ տեղս եկած՝ Աբդիւլ-Համիդի նախկին կամերհէր՝ Ֆուադ-բէյը: Պարզվեց, որ նա խորհրդակցութիւններ է ունեցել տեղական գործիչների հետ:

Երէկ պատրիարքական եկեղեցում հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց Գրեվէնի միտրոպոլիտ Էմէլիանի յիշատակին: Պատարագը մատուցեց տեղական պատրիարքը: Ներկայ էին յոյն պատգամաւորներ և բազմաթիւ աղօթողներ:

Օսմանեան գործակալութիւնը հերքում է այն լուրերը, թէ փոփոխութիւններ են կատարվելու Սայիդ-փաշայի կաբինէտում:

Ստամբուլի վերջին հրդեհը ոչնչացրեց 400 տուն. վնասը 400,000 ֆունտ է.

Մի շաբաթում խոլերայից մեռան 14 հոգի:

—

Բերլին.—Բէյխստագ: Ներկայ են պետական կանցլերը, մինիստրները և բազմաթիւ հասարակութիւն: Կենտրոնի պատգամաւոր Շպանը ընդգծում է կենսական մթերքների թանգութիւնից առաջ եկած աննորմալ դրութիւնը, շեշտում է, որ երկաթուղային տարիֆների պակասեցումը շահաւէտ է աւելի շուտ առևտրականին, քան սպառողին: Հռետորի կարծիքով, պէտք է վերացնել պաշտպանողական հարկը: Սօցիալ-դեմօկրատ Շէյդէմանը պահանջում է վերացնել մորթվող անասուններից և կերից առնվող հարկերը: Ազատ մտածող Էզերը մթերքների թանգութիւնը հետևանք է համարում գերմանական տնտեսական քաղաքականութեան, որ ձգտում է բարձր գներ պահել կենսական մթերքների վրա:

Բէտման-Գոլվէգը, առարկելով հռետորներին, մատնանշում է, թէ Գերմանիայի տնտեսական քաղաքականութեան դէմ լսվող գանգատները հանդիսանում են լոկ նախընտրական ագիտացիայի մանեօվր. կառավարութիւնը վճռական կերպով պաշտպանելու է իր տնտեսական քաղաքականութիւնը, հաւատացած լինելով որ այդ քաղաքականութիւնը ծառայում է յօգուտ ազգի կեանքի:

—

Բուդապեշտ.—Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, Թիւրքաց կառավարութիւնը Ունգարիայում ձեռք է բերել 15,000 ձի:

—

Բուդապեշտ.—Օպպօզիցիայի հետ կօմպրոմիս կապելու բանակցութիւնները ապարդիւն են: Կառավարական կուսակցութիւնը կռիւ է մղելու օբստրուկցիայի դէմ:

—

Սօֆիա.—Կառավարութիւնը համաձայնեց, որ Սօֆիայում Թիւրքաց դեսպան նշանակվի Աթէնքի նախկին դեսպան Նաբի-բէյը, և առաջարկեց Բ. Դրան վերսկսել առևտրական պայմանագրի բանակցութիւնները:

—

Ստրասբուրգ.—Էլզաս-Լօթարինգիայում տեղի ունեցան երկրորդ պալատի առաջին ընտրութիւնները ներկայացուցչական ժողովի նոր օրէնքի հիման վրա: Ընտրվեցին 2 լիբէրալ, 19 կենտրոնական, 5 սօցիալիստ, 9 հոգի բլոկից, 1 անկախ ագրար: 24 շրջաններում լինելու են լրացուցիչ ընտրութիւններ:

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Խուժանավարութիւններ

Կ. Պոլիս, 26 սեպտեմբեր

Իտալ և Թիւրք պատերազմը, որ չարաչար կը խայտառակէր օսմ. կօմիտէն և անոր վրայ հաւատք դնողները, վերջին ճիգերու կը մղէ իր պաշտպանները, համոզելու համար թէ երկիրը շատ փայլուն վիճակ մը ունի՝ շնորհիւ... կօմիտէին: «Թանին», կօմիտէին օրգանը, շարունակ պատերազմաշունչ հրատարակութիւններ կընէ և կուզէ հաւատացնել, թէ որչափ պատերազմը երկարի, Իտալիոյ պարտութիւնը այնքան ջախջախիչ պիտի ըլլայ: Եւ կարծես թէ իր բոլոր վախը այն է, թէ պատերազմը դադրեցնելու համար եղած ձեռնարկները մի գուցէ յաջողին և օսմ. սահմանադրական կառավարութիւնը զրկուի փառաւոր յաղթութենէ մը, որուն համար երբէք տարակոյս չունի: Այս տեսակ շշորդ հետևութիւններ հանելու համար մենք կը կարծէինք որ մարդ հայ ծնած ըլլալու է և այն ալ կուսակցական հայ:

Գիտէք թէ 1908 թ. յուլիս 10-էն անմիջապէս յետոյ Կ. Պոլիս խուժեցին կարգ մը խուժանավարներ, որոնք ուրիշ գործ չունէին՝ եթէ ոչ աւետել հայ ժողովրդին, թէ իր յոյսերը, աշխատութիւնները և... մանաւանդ իր նահատակութիւնները պսակուած էին Թիւրքիոյ սահմանադրութեան հռչակմամբ, որ հայոց շնորհքն էր: Եւ պակաս չեղան տխմարներ, որոնք որոտընդոստ ծափերով կուլ տուին այս մեծ սուտերը... իրաւ հաւատալով թէ այլևս հայք Աւետեաց երկիրը հասած էին... իրենց իսկ ձեռներէցութեամբը, և թափուած արիւնը ի զուր չէր զոհուած:

Վերջին դէպքերը եկան համոզելու, թէ հայը դեր մը չունէր սահմանադրութեան հռչակման մէջ և հայուն թափած արիւնը, իր նպատակէն վրիպած, ի զուր տեղը թափուած էր և տակաւին չպիտի դադրէր թափուելէ, շնորհիւ իրենց հացը արիւնի մէջ թաթխելով ուտելու չվարանող ոճրագործներու քմահաճոյքին: Անոնք 1910 թ. յուլիս 10-ին յաջորդող խանդավառութեան մէջ յեղաշրջմամբ կուզէին պատմութեան և մարդկութեան առջև զերծանիլ արեան պատասխանատուութենէն, որմէ սակայն չեն կրցած ազատիլ դեռ:

Հիմա կօմիտէն նոյն արիւնոտ ու ոճրապարտ դերը կը կատարէ քմահաճոյքին համար քանի մը բռնապետներու, որոնք ամեն գնով կուզէին պետութիւնը քամել տղրուկի պէս: Ասոր համար է, որ իտալական անյուսալի հարուածին դէմ՝ կուզեն քաջութիւն կեղծել, և պարտութիւնը՝ իբր յաղթութիւն հաւատացնել իրենց կոյր հետևորդներուն:

Եւ այս խուժանավարական գրութիւնները կարդալով է, որ Թիւրք խուժանը խանդավառ կերպով մը համոզուած է, թէ Տրիպօլիսը աննուաճելի պիտի մնայ, և թէ իսլամական եռանդով վառուած տրիպօլսեցիները ուժգին դիմադրութիւն մը պիտի ընեն, թէ Հնդկաստանի և Ալժիրիոյ, Եգիպտոսի իսլամները մեծ պատրաստակամութեամբ պիտի օգնեն օսմ. կառավարութեան, թէ վերջապէս սուլթանը իբր խալիֆա ամենամեծ ազդեցութիւն ունի և կրնայ ոտնահար ընել աշխարհը, թէ տնտեսական պատերազմ հռչակելով Իտալիոյ դէմ կրնանք Իտալիան սովամահ ընել, և այլն:

Եւ Թիւրք դատարկամիտ ամբոխը կը հաւատայ այս խօսքերուն, երբէք չմտածելով թէ այս մեծ պոռոտախօսութեանց հակառակ՝ մինչև հիմա Թիւրքիա տեղի տալէն զատ բան մը չըրաւ: Իր նաւատորմիղը մաղապուր կրցաւ զերծանիլ թշնամիին հետապնդութիւններէն, Տրիպօլսոյ մէջ ոևէ լուրջ դիմադրութիւն չտեսնուեցաւ, ընդհակառակ ցեղերը փոխանակ ընդդիմութեան՝ հնազանդութեան ցոյցեր կընեն և այլն:

Գէթ այս պատահարները պէտք էր որ չափաւորէին իթթիհադական թերթերուն լեզուն:

Կ. Պոլսոյ մամուլը, բաղդատմամբ Սելանիկ հրատարակուած զինուորական կարգ մը թերթերուն, շատ չափաւոր է: Որոշ գաղափար մը կազմելու համար՝ թիւրքական անկենցաղագիտութեան, լեզուագարութեան, անպատկառ հայհոյութիւններուն և յանդգնութեան վրայ, կարժէ աչքէ անցնել Սելանիկ և Մանաստըր հրատարակուող կարգ մը արտառոց կերպով արիւնարբու թերթերը, որպիսիք են՝ «Սերենկի» (սուրն), «Սիլահ» (զէնք), «Իլերի» (յառաջ) և այլն թերթերը։

Պատահմամբ անցեալ օր ձեռքս հասաւ «Սիլահի» սեպտ. 21-ի թիւը, որուն առաջին երեսին ճակատը խոշոր տառերով գըրուած էր իբր վերնագիր. «Իտալացի շուներուն եւ օսմանցի առիւծներուն պատերազմը»։

Այս հատուածին մէջ՝ իբր նմոյշ կրնամ մէջ բերել հետեւեալ տողերը.

«Իտալացի շուներու նաւատորմին կը սպասենք, ինչո՞ւ չէք գար։

«Մեր սուիններուն և սուրերուն, թնդանօթներուն կրծնելով, մեր այրութեան, քաջութեան վստահելով կը սպասենք ձեր գլուխները փրցնելու, ձեր աղտոտ ու կեղտոտ թոքերը բզիկ բզիկ ընելու, ձեր անպատիւ և խայտառակ երեսներուն թքնելու համար. ահա տակաւին կը սպասենք, կը յուզուինք, կը զայրանանք, թէ ինչու չէք գար. ձեզի կը սպասենք, ինչու չէք փութար. ահա քաջերու հրապարակը, ահա հերոսներու բոյնը. մի՛ փախչիր, նենգ, մի՛ փախչիր, վատ, մի՛ փախչիր, խայտառակ. մեր զինուած այրերը, քաջերը չեն փախչիր սուրի և սուինի շլացուցքէն, թնդանօթի և հրացանի աղմուկէն. հոն կը վազեն՝ հոգի տալու, հոգի առնելու, փառք վաստկելու, փառք ցոյց տալու կերթան, մինչդեռ դուն, նենգամիտ վախկոտներու պէս, անպատիւներու պէս, խայտառակներու պէս, կը շրջիս բաց ծովերուն վրայ գողտուկ տեղեր։

«Միշտ նենգութիւն, միշտ վատութիւն ցոյց տալով գործ տեսնել կուզես. թո՛ւ քու երեսիդ, անպատիւ։

«Ինչպէս մօտերս կախաղան պիտի չհանենք ձեր փտած նաւերուն կայմերով և չուաններով խոշոր խեղդակապեր պիտի պատրաստենք և ձեր գլուխներով պիտի լուսաւորենք Սելանիկի քարափը. մի փախչիր, խայտառակ, մի փախչիր, շուն. օսմանցիները քեզի պէս վախկոտ, քեզի պէս խայտառակ կարծեցիր միթէ։ Օն անդր, նայինք, կը սպասենք. ինչու չէք գար»։

Ասոնք կը կարդայ խուժանը և բնական է թէ կը բորբոքի, կարծելով թէ իտալական յարձակման մը դէմ ամեն կերպով պատրաստ է երկիրը։

Այդ փախստական հռչակուած իտալացիները յանդգնութեամբ օսմանեան եզերքները կը զարնեն, Տրիպոլիսը կը գրաւեն, մինչ մենք ենք, որ փախուստ կուտանք՝ նաւատորմիղնիս մինչև Վոսփոր բերելով, մեր ծովեզերքները անպաշտպան ձգելով և այլն։

«Սիլահ», այս գռեհիկ լեզուն գործածելով յանուն «օսմանցի առիւծներուն», շատ գէշ գաղափար մը կուտայ օսմանեան վեհանձնութեան վրայ, որ կ'երեւայ թէ բնաւ գոյութիւն չունի «Սիլահի» զինուորական խմբագիրներուն քով։

Ասպետական մեծանձնութեան պակասը, որ ցոյց կը տրուի խուժանավար այս լրագրութեան կողմէ, միայն թշնամիներու հանդէպ չէ, այլ նաև բարեկամներու։ «Նովոյէ Վրեմիա»՝ իտալ և թիւրք պատերազմին հանդէպ Ռուսիոյ չէզոքութեան վրայ խօսելով՝ յայտնած ըլլալուն համար, որ Թիւրքիան իր ընթացքովը արժանի չէ եղած ռուս դիւանագիտութեան աջակցութեան, «Սիլահի» թշնամանքին առարկայ կը դառնայ։ Խօսքը Ռուսիոյ ուղղելով «Սիլահ» կը կոչէ. «Ո՛ն անդր, խայտառակ աւազակներ, ամեն դէշութիւն և խայտառակութիւն ձեր գլխէն ծագում չառին միթէ։ Մոսկոֆը ով կըլլայ կոր, որ մեզի պիտի օգնէ եղեր. միթէ առիւծները գայլերուն կընկերակցին։ Հիւսիսի սառնապատ անապատներուն մէջ իր սեւ սանձերով, սուր և արիւնոտ ճանկերով մարդկութեան կուրծքին վրայ ամենէն դառն վէրքերը բացող գայլն մը աւելի աղէկ է որ 100,000 վերստ մեզմէ հեռու մնայ. մենք պէտք չունինք մոսկոֆին չէզոքութեան կամ օժանդակութեան։ Միջազգային օրէնքը ինչ որ կը պահանջէ, այն պէտք է որ ըլլայ։ Այդ օրէնքը ոտնակոխ ընողներուն միայն մեր սուինները կը պատասխանեն»։

Աւելորդ է մէջ բերել Հելլէն Թագաւորութեան, Բուլղարիոյ, Կրետէի, սերբերու, չեռնոգորցիներու և այլոց հասցէին եղած զարհուրելի նախատինքները և ծանր բառերը, որոնք խուժանի արդէն խանգարուած միտքը գրգռելէ զատ ուրիշ օգուտ չունին։

Զարմանալի է որ կառավարութիւնը — եթէ անոր նմանող բան մը կայ Թիւրքիոյ մէջ — թոյլ կուտայ, որ այս թերթերը ծախուին արձակ համարձակ և առաջնորդողի դեր կատարեն այս երկրին մէջ, ուր լրագիրները շատ անգամ պատգամատուի պաշտօն կը կատարեն։ Շառայ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Անտառային ռէվիզիա

Սեւքար, 3 նոյեմբերի

Այս օրերս անտառային վերաքննիչը երկրորդ անգամ եկաւ քննութեան անտառապահ Օրդինեանի մասին։ Գանգատաւոր Ղուկաս Աթաբէկեանը շատ սուր կերպարանք տուեց գործին, որը իր ժամանակին մեծ ծաւալ կը ստանայ։ Ղուկաս Աթաբէկեանը անտառային խոշոր կապալառուներից է Կարսի գծի վրայ։ Կրակ

—

Դպրոցական նոր շինութիւն

Հաղբ, 3 նոյեմբերի

Երէկ խուռն բազմութեան ներկայութեամբ օծվեց մեր գիւղական միդասեան դպրոցի շէնքը, որ կառուցել է իր ծախքով մեր համագիւղացի Ջիվանշիր Ալէքսանեան Ղազեանցը։

Շէնքը յարմար է նաև երկդասեան դպրոցի համար։ Անգրագէտ Ջիվանշիրը կատարեց իր պարտքը. տեսնենք կը կատարեն իրանց այդպիսի պարտքը մեր օտարաբնակ համագիւղացիները՝ դպրոցը երկդասեանի վերածելով կամ գոնէ միդասեանը պահպանելով։ Իսրայէլ Ղազեանց

—

Ցածր բերք Ցղնայում

Ցղնա, 1 նոյեմբերի

Ցղնայի գիւղատնտեսութեան գլխաւոր առարկան շերամապահութիւնն է։

Այս տարի շերամի բերքը աջող եղաւ՝ մախաղին տալով 30—37 ֆ. բոժոժ։

Հացաբոյսերը ցրտահար եղան, իսկ անջրդիները բոլորովին անպէտքացան։

Մրգը միջակ էր, խաղողը սակաւ։ Այժմս, շնորհիւ պօստային ճանապարհի, չոր մրգի արդիւնաբերութիւնը զարգանում է. չոր ծիրանը այս տարի ծախվեց մինչև 2 ր. 20 կ. պուդը։ Անցեալ տարիները, երբ անիւային ճանապարհ չը կար, ծախվում էր 1 ր. 20—25 կ.։ Չոր թուզը ծախվեց 1 ր. 30 կ., իսկ մինչ այդ ծախվում էր 70—80 կոպէկով։ Ընկոյզի բերքը լաւ է. 1000-ը ծախվում է 1 ր. 10—20 կ., իսկ միջուկը 5 ր. 50 կ.—6 ր. պուդը։ Ընկոյզի միջուկը արտահանվում է գլխաւորապէս Մոսկվա, ուր ծախվում է 10 ր.—13 ր. պուդը։

Շնորհիւ «Գիւղատնտես» շաբաթաթերթի, այս տարի բամբակ ցանելու փորձեր եղան։ Պէտք է ասել, որ սպասվածից աւելի արդիւնք է տալիս. գիւղացիները, խրախուսված այդ օգտաւէտ ձեռնարկութիւնից, մտադիր են եկող տարվանից ընդարձակել բամբակի մշակումը։

Կենսական մթերքների գները հետեւեալն են. ոչխարի միսը 14 կ., տաւարինը 10 կ., ձուն 14 հատը 20 կ., կարագը 20—22 ր. պուդը, մեղրը 15 ր. պուդը, ցորենը 1 ր. 90—2 ր., գարին 1 ր. 15 կ., բրինձը (Նախիջևանի) 4 ր. 50—80 կոպ. պուդը։ Գիւղացիք դեռ այսպիսի թանգութիւն չեն տեսել։ Լեռն-Տէրն

—

Վատ բարքերից տուժող համայնք

Խանքենդ, 4 նոյեմբերի

Այսօր պրիստաւը ժողովել էր իր մօտ հայ, ռուս և թուրք հասարակութեան և հրամայել, որ անցեալ օգոստոսի 17-ին Ցակոբջան Զաքարեանցի կոտրված խանութի փողը կամ տան, կամ թէ չարագործը յանձնեն։

Նման դէպքերը շատ են պատահում Խանքենդում, և միշտ տուժողը լինում է անմեղ ժողովուրդը։ Անցեալ տարի գողացվեց Ցակոբ Աստուածատրեանցի եզը և մի լեզգի անտառապահի ձին։ Այս երկուսի՝ եզան և ձիու փողը ժողովրդից հաւաքեցին տուին տէրերին, չը նայած որ ժողովուրդը նոյնիսկ երդվեց, որ ինքը գողութեան տեղեակ չէ։ Դրանից յետոյ գողանում են Աւագ Տէր-Աբրահամեանցի և Կարապետ Օհանեանցի երկու կովը։ Սրանք գողի հետքը գտնում են և յայտնում պրիստաւին, բայց թողնվում է անհետեւանք։ Եւ քանի-քանի գողութիւններ, մինչև անգամ սպանութիւններ եղել են, և չարագործը մնացել է անպատիժ։

Այժմ Զաքարեանցի խանութի փողը՝ 500 րուբլի են պահանջում, որ պիտի տայ ժողովուրդը, այն էլ խեղճ աղքատը, որը այս նեղ օրերին հազիւ է կարողանում մի կերպ օրվայ պարէնը իր հալալ արիւն-քրտինքով հայթայթել, որը դեռ նոր է ուզում ձմեռվայ ուտեստի պաշար պատրաստելու համար դիմել հարուստին և նրանից տոկոսով փող պարտք առնել։ Ի՞նչ անէ տառապեալ ժողովուրդը, երբ նա այս ամառվայ երեք ամիսներին եղել է պարապ, անգործ։ Արդեօք նա մեղաւոր է, որ հիմա ուրիշի վնասը քաշէ, «Ջարմա» տայ։

Հասարակութեան մէջ լինում են լաւ և վատ բարքի տէր մարդիկ։ Չէ կարելի ուրանալ, որ մեր խանքենդեցիք ճանաչում են միմեանց և իմանում են՝ ով է ինչ բարքի տէր։ Եւ այսպէս իրար ճանաչելուց յետոյ էլ, երբ մենք կարող ենք չարութիւնը արմատախիլ անել մեր միջից և հանգիստ ապրել, դարձեալ անմեղ տուժում ենք։ Արդեօք սա ինքնաճանաչութիւն չունենալ է թէ երկչոտ ենք։ Թէ առաջինը և երկրորդը եթէ կայ մի հասարակութեան մէջ, նա դատապարտելի է։ Ա. Ասլանեան

ԱՌԱՋԻՆ ՁԻՒՆԸ

I

Սաղիան, 4 նոյեմբերի

Երկարատև անձրևին յաջորդեց մայանչ-մայանչ ձիւնը։ 14 ժամ է, ինչ ձիւն է գալիս։ Ձիւնի սոսկալի պատկերը գիւղացիներին սարսափ է ազդում։ Բաւականաչափ այգիներ մնացել են առանց քաղելու։ Եթէ ձիւնը շարունակվի մի քանի օր, հաւանական է, որ այգետէրերը զրկվեն տարվայ բերքից, անշուշտ խաղողը կը փտի ու կը փչանայ։ Աւելի շատ այգիներ ձիւնի տակ են մնացել հարևան Գիւրջևան և Թօհլուջ գիւղերում։ Ձիւնի անսպասելի գալը միայն նրանց չէ վնաս հասցնում, որոնց այգիները չեն քաղվել, վնասել է նոյնիսկ նրանց, որոնք քաղել են և գինի դարձրել։ Ձիւնից առաջացած սառնամանիքը խանգարում է գինու կանոնաւոր եռմանը։ Գիւղացիք չը գիտեն բացօթեայ կերպով գինին եռացնել, կատարեալ գինի դարձնել, որպէսզի պաշտպանված լինի զանազան տեսակ անկային և այլ հիւանդութիւններից։ Մի խօսքով՝ այս տարի բնութիւնը մի սոսկալի հարուած հասցրեց շրջանիս հայ գիւղացիութեան։ Դեռ լաւ է, որ գիւղացիք հերկ չեն արել, որոնց կանաչ արտերը կարող էին փտել կամ ցրտահար լինել։ Անձրևները և ձիւնը խանգարեցին Սաղիանի փորձադաշտում աշնան աշխատանքները վերջացնել։ Երեցեանը կարողացաւ երկու շաբաթ առաջ միայն 2 սաժէն լայնութեան և 60 սաժ. երկարութեան տեղ շարքացանով սերմել, որը արդէն ծլել և կանաչել է, իսկ եկած ձիւնից կարող է վնասվել։ Սպասում է լաւ օրերի՝ ամբողջ $2^1/_2$ դեսեատին ցանելու համար։ Կ. Աղասեան

II

Գորիս, 5 նոյեմբերի

Եղանակները մեղմում շատ լաւ էին, սակայն ամսիս 4-ի գիշերը անձրևին յաջորդեց ձիւն, որը տեղաց համարեա թէ երկու օր անընդհատ։ Ձիւնի հաստութիւնը հասաւ ուղիղ $^3/_4$ արշինի։ Այդ անսպասելի և անժամանակ եկած ձիւնը մեծ վնաս տուեց այգիներին և բաղերին. քաղաքումս կոտրվել են ձիւնի ծանրութիւնից շատ ծառեր, իսկ քաղաքից ցած մինչև Քարահունջ տարածվող բաղերը (մեծ մասամբ թթենի) հսկայական վնասներ են կրել։

Ամսիս 5-ին առիթ ունեցայ Քարահունջ գնալու և ականատես եղայ այն աւերումներին, որ արել էր ձիւնը։ Ծառ չը կայ, որ կոտրված ճիւղ չունենայ. ճանապարհի աջ ու ձախ կողմերից ծառերը կոտրվել և ճանապարհն անգամ անանցանելի են դարձրել։

Նման վնաս հասել էր և 1904 թ. նոյն օրը, երբ դարձեալ ծառերի տերևները չը թափված՝ մեծ ձիւն եկաւ և ահագին վնասներ տուեց բաղերին։ Սազ.

III

Ջէբրայիլ (Կարեագ. գաւ.), 4 նոյեմ.

Բոլորովին անսպասելիօրէն, ժամանակից շատ շուտ, այսօր եկաւ բաւականաչափ ձիւն, բայց հողը ծածկվեց փոքր շերտով, որովհետև հողի տաքութեան շնորհիւ ձիւնը հալվում էր։ Ձմրան այսպիսի շուտ մուտքը կունենայ իր վատ հետեւանքները, որովհետև մեզ մօտ առհասարակ ձմեռը սկսվում է նոյեմբերից։ Խեղճ գիւղացիութեան համար ամառնաչափ աւելի ձմեռը մի մեծ հոգս է, մանաւանդ որ տարվայ բերքը սակաւ է թէ հացահատիկների և թէ խոտեղէնի կողմից։ Հացի թանգութիւնը արդէն սկսվել է մեր գաւառի զանազան մասերում, իսկ ձմեռվայ այսպիսի վաղ մուտք ունենալը պակասը լրացրեց։ Մեծ նշանակութիւն ունէր անցեալներում Պարսկաստանից հացահատիկների ներմուծումը, բայց այժմս դժբաղդաբար դրանից էլ զրկվեց մեր գաւառը։ Պարսից կառավարութիւնը խիստ հրաման է արձակել օտար երկիրներ հացահատիկ չարտահանել, ի նկատի ունենալով երկրի վատ եկամուտը։ Ուրեմն մնում է մեր գաւառի բանիմաց մասին վաղօրօք մտածել գաւառի այս վատթար դրութեան մասին։ Աս. Տէր-Յարութիւնեան

ԿԱԹՈՂ. ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

I

Իգդիր, 4 նոյեմբերի

Ամսիս 2-ին տեղիս ծխ. դպրոցի դահլիճում կայացաւ Սուրմալուի գործակալութեան շրջանի ծխ. ներկայացուցիչների ժողովը՝ ընտրելու համար երկու պատուիրակ այս շրջանից, որպէսզի մասնակցեն կաթ. պատգամաւորի ընտրութեանը Երևանում։ Ժողովին նախագահում էր գործակալ Գ. ք. Տէր-Գրիգորեանցը. քարտուղար էր ուսուցիչ Բ. Ղարիպջանեանցը։

Ինչպէս ստուգվեց, ընտրողական թերթեր ստացել էին գաւառի 21 հայ գիւղերի բոլոր եկեղեցիները. սակայն պակասել էին գալու ամենամօտ գիւղերի ներկայացուցիչները, որոնց թւում Իգդիրը։

Նախ քան ժողովի բացումը Արասդեօլի ներկայացուցիչ Իգդիրցի Ց. Աւագեանը պահանջեց կողմնակի մարդկանց ժողովից հեռացնել, առարկելով որ իրանց ներկայութեամբ կարող են ճնշում գործ դնել ընտրութեան ժամանակ։ Բոլոր ժողովականները անտեղի համարեցին կողմնակի անձանց հեռացնելը, մանաւանդ որ դրանց մէջ կային և թղթակիցներ։

Նախագահը ծխ. ժողովների թղթերը ստուգելուց յետոյ առաջարկեց ներկայ 26 ծխ. ներկայացուցիչներին ընտրել երկու պատուիրակ, որոնք պիտի գնան Երևան թեմ. պատգամաւոր ընտրելու հոկտ. 30-ին։ Առաջարկվեց նախ քան պատուիրակների քուէարկութեան անցնելը՝ կարծիքներ լսել կաթ. թեկնածուների մասին։

Թեր և դէմ բուռն վիճաբանութիւնից յետոյ՝ գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին պատուիրակներ բժ. Ղափանցեան և Տ. Յովհաննիսեանց։ Ընտրութիւնը աջող էր։ Սաթ. Զաքարեան

II

Գորիս, 5 նոյեմ.

Ամսիս 2-ին Գորիսի ս. Լուսաւորիչ եկեղեցում կայացաւ Տաթեւի վիճակի պատուիրակների ընտրութիւնը։ Աւելորդ եմ համարում ընտրութեան մանրամասնութեան մասին խօսելու, որովհետև մի շարք տարօրինակութիւններ ի նկատի առնելով, նոյնիսկ ժողովը իրաւական լինելու հիմք և անուն անգամ չէր կրում։ Կողմնակի մարդիկ իրաւունք չունէին խօսելու։ Ղափանի շրջանի 30 ներկայացուցիչների ձայնը տրված էր մի քահանայի և մի պարոնի, որոնցից առաջինը նախ իրաւունք չունէր ընտրվելու և զրկվեց ձայնի իրաւունքից, երկրորդի իրաւասութիւնը ոչ մի կերպ չէր վաւերացված և վերջապէս 30 ձայնից 20-ը մի կողմ ձգելով և 10 ձայն երկրորդ պարոնին տալով՝ ժողովը թէև գլուխ բերվեց, բայց այնուամենայնիւ դրան չէր կարելի ժողով անուանել, այլ գլխից ռադ անելու մի գործ։ Այս բոլորից յետոյ հետաքրքրական է կազմված արձանագրութիւնը, որը մենք առիթ չունեցանք կարդալու, թէ ինչ ձևակերպութիւններ է կրում այդ պակասութիւններով հանդերձ։

Պատուիրակներ ընտրվեցին Մ. Տէր-Գրիգորեան (Գորիսի քաղաքագլուխ) և Ց. Գէորգբէգեան։

Կաթողիկոսական թեկնածուների մասին առանձին խօսակցութիւն չեղաւ, որովհետև ոչ ոքի չէին ճանաչում, սակայն ցանկալի համարվեց ընտրել այնպիսի կաթողիկոս, որ ժողովրդի վստահութիւնը վայելէ, ազգի և եկեղեցու նախանձախնդիր ու անդաւաճան կերպով վարել կարենայ մեր գործերը, սիրէ եկեղեցին և լինի կրթութեան նախանձախնդիր անձնաւորութիւն։ Սաղանդարեան

III

Հին-Նախիջևան, 4 նոյեմբերի

Ամսիս 2-ին քաղաքումս կայացաւ ծխ. ներկայացուցիչների ժողով, որը բաւական հետաքրքրական անցաւ։ Ժողովի նախագահ ընտրվեց գիւղատնտես Թադէոս Տօշեանը, որը և առաջարկում է ժողովականներին խօսել կաթողիկոսական թեկնածուների մասին։ Անուանում են թեկնածուներ՝ Սուրէնեան, Դուրեան, Օրմանեան, Մեսրոպ, Մուրադբէգեան և Կարապետ եպիսկոպոսներին։ Ներկայացուցիչ Ա. Արասխանեանը առաջարկում է Դուրեան եպիսկոպոսին և խօսում է նրա առաւելութիւնների մասին։ Հանդիսականներից մէկը, որին ժողովը որոշում է ձայն չը տալ խօսելու որպէս ոչ իրաւատէր ծխական ներկայացուցչի, բողոքում է ժողովի որոշման դէմ։

Ժողովը երկար խորհրդակցութիւնից յետոյ որոշում է կաթողիկոսական թեկնածուներից ձայն տալ միայն Սուրէնեան, Դուրեան, Մեսրոպ և Մուրադբէգեան Խորէն եպիսկոպոսներին։ Ապա ժողովը ձայների մեծամասնութեամբ պատուիրակներ է ընտրում Թ. Տօշեանին և Ղ. Բաղալեանին, յանձնարարելով նրանց պաշտպանել վերոյիշեալ եպիսկոպոսների թեկնածութիւնը Երևանի պատուիրակային ժողովում։ Պատահական

IV

Ալէքսանդրօպոլ, 10 նոյեմբերի

Կիրակի, ամսիս 9-ին, տեղիս յաջորդարանի դահլիճում կայացաւ վիճակիս ներկայացուցիչների ժողովը՝ ընտրելու 2 պատուիրակ, որոնք մասնակցելու են ամսիս 30-ին Երևանում կայանալիք ժողովին, ընտրելու մի պատգամաւոր։ 260 ներկայացուցիչներից ներկայ էին 112 ներկայացուցիչ։ Ժողովը ճանաչվեց օրինաւոր, որովհետև երկրորդ ժողովն էր։

Նախագահ ընտրվեց Ց. Տ. Մարտիրոսեան, իսկ քարտուղար՝ Ռ. Աւետիսեան։ Ներկայացուցիչ Արտ. Տէր-Ցակոբեան ցանկութիւն յայտնեց, որ ապագայ կաթողիկոսը լինի ռուսահպատակ և Էջմիածնին ծանօթ անձ, որպէսզի զանազան անձանց ձեռքին խաղալիք չը դառնայ։ Թեկնածուների մասին աւելորդ համարվեց խօսել, որովհետև, ինչպէս իրանք յայտնեցին, ներկայացուցիչների 99%-ը անծանօթ են կաթողիկոսական թեկնածուներին։ Իսկ ներկայացուցիչ Արսէն Ղլթճեան (Նախկին վարդապետ) թէև ցանկութիւն յայտնեց խօսելու կաթ. թեկնածուների մասին, բայց նրա նախկին խօսածներից հասկացան, թէ ում մասին էր ուզում նպաստաւոր խօսել, և չուզեցին նրան ևս լսել։

Թեկնածուներ առաջարկվեցին. Արշակ Ջիլինգարեան, Ց. Տէր-Մարտիրոսեան, Վռամ Բարայեան, Աղաբէկ Խնկոյեան, Արսէն Ղլթճեան։ Գաղտնի քուէարկութեամբ պատուիրակներ ընտրվեցին Ց. Տէր-Մարտիրոսեան (օրմանեանական) և Աղաբէկ Խնկոյեան (?)։ Մ. Տարխանեան

ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

—

Գաւառական ճանապարհների հաղորդակցութեան անկանոնութեան պատճառով փոխադրութեան գործը մեզանում զանազան պատահականութիւնների է ենթարկված։ Մի ամբողջ գաւառաշրջան կամ ծայրագաւառի գիւղախմբերի մի հատուած օրերով ու շաբաթներով տուժում է՝ այլ և այլ նիւթերի և ապրանքների փոխադրութեան անկանոնութիւնից։ Ճանապարհների անստանելի դրութիւնը, քրէհատրութեան անձեռնտու պայմանները, սայլորդների, կառապանների և ֆուրգոնչիկների անհաճելի կապրիզները մեր գաւառի փոխադրութեան գործը սեղմել են էլ աւելի նեղ շրջանակի մէջ և դժուարատար պայմաններում, մանաւանդ այնպիսի ժամանակներում, երբ գազանաբար գործում է տարւոյ ժանտախտը կամ փակ են լինում հաղորդակցութեան կէտերը կամ հէնց ուղղակի անձրևների ու ցեխերի շրջանն է սկսվում ու երթեւեկութիւնը խափանվում։

Սակայն այդ կապրիզներից կամ անպատեհութիւններից խոյս տալու համար և կենսական մթերքների տեղափոխութեան առասպելական թանգութիւնից մի փոքր ազատ մնալու համար, գաւառիս փոխադրութեան գործը մասամբ յանձնված է առագաստաւոր նաւակներին, որոնք իրանց նահապետական դանդաղկոտութեամբ յաճախ խաղալիք դառնալով Սևանի ծովակի ալիքներին՝ միշտ փոխադրութեան գործը տապալում են, ենթարկվելով զանազան դժբաղդութիւնների և խորտակումների՝ իրանց բեռներով և նաւաստի ղեկավարներով... Այո, մի 10—15 կ. պուդին պակաս փոխադրական վարձ վճարելուց խուսափելով՝ յաճախ մեր մթերքները — ալիւրը, շաքարը, երկաթը, փայտը, ցորենը, գարին և այլն — կուլ են գնում ծովի յատակը և ձկների ու գոռ ալիքների կերակուր դառնում...

Այնուամենայնիւ, փոխադրութեան գործի և ճանապարհների հաղորդակցութեան մասին խօսելով, չէ կարելի լռութեամբ անցնել այն անհրաժեշտութեան վերաբերմամբ, որը տարիներ առաջ սուր կերպով զգացվեց տեղական հասարակական շրջաններում և խօչընդոտների ենթարկվեց։ Դա Սևանի ծովակի վրա շոգենաւի հիմնարկութեան գործն էր, երբ մեր քաղաքացիք մտադրվեցին ակցիաներ կազմելով այդ գործը գլուխ բերել։ Սակայն այն ժամանակվայ ազնիւ Մեհրիսովսկին Պետերբուրգ գնալով անկարող եղաւ շոգենաւի հիմնարկութեան գործը աջողեցնել բարձր կառավարութեան առաջ, ուստի մի որոշ գումար էլ ծախսելով հասարակութեան դրամներից (փայերից)՝ յետ դարձաւ տեղս ձեռնունայն։

Երբ ուրիշ երկիրներում փոխադրութեան կամ հաղորդակցութեան գործի նկատմամբ հիմնվում են շոգեկառքեր, աւտոմոբիլներ և հանրակառքեր, մեզանում, ընդհակառակն, փոխադրութեան գործը յանձնված է եզներին, դանդաղաշարժ գոմէշների և պառաված ձիերի հաճոյքին և իշապանների կարաւաններին։ Եւ երբ աւելի վաճառաշահ վայրերում կամ աւելի կուլտուրական շրջաններում մեծ ուշադրութեան է առնված ճանապարհների հաղորդակցութիւնը, ընդհակառակն մեր գաւառում դա բարձի-թողի էր արված։ Միայն վերջերս մի փոքր ուշադրութիւն դարձվեց մեր ճանապարհներից մի գծի վրա (30—33 վերստ), որը մի քիչ սպեղանի կարող է լինել մեր փոխադրութեան քայքայված գործի վերաբերմամբ, մինչդեռ գաւառի հարաւ-արևելեան կողմի հաղորդակցութիւնը դարձեալ նոյն անմխիթար դրութեան՝ է ներկայանում։

Սակայն այսպէս թէ այնպէս, յօգուտ փոխադրութեան գործի կարևոր է և անհրաժեշտ, որ գաւառական հաղորդակցութեան կէտերի վրա լուրջ ուշադրութիւն դարձվի, ազատելով ժողովրդին փոխադրութեան գործի աննորմալ վիճակից։

Գ. Մինասեան

Նոր-Բայազէտ, 28 սեպտեմբերի

ԱՆՆԿՈՒՆ ԳՈՐԾԻՉ

—

Մեր կեանքը լի է անգոյն, անկայուն և փոփոխամիտ մարդկանցով և նոյնիսկ հասարակական գործչի յատկութիւն ունեցող անձերով։ Շատ յաճախ կարելի է տեսնել այնպիսի մարդկանց, որոնք այս գործից այն գործն են վազում և այդպէս անվերջ թափառումներ և որոնումներ կատարում, այդպիսով անցկացնելով իրանց կեանքը անարդիւնք և ոչ մի ստեղծագործիչ աշխատանք չը կատարելով։

Հազուագիւտ են, նոյնիսկ մատների վրա կարելի է համարել այնպիսի գործիչներին, որոնք հասարակական որևէ գործի ձեռնարկելով մինչև մի որոշ հանգրուանի կարողանան հասցնել այն։

Ահա այդպիսի հազուագիւտ գործիչների դասին է պատկանում հայ բեմի ժրաջան մշակներից տիկ. Զաբէլը, որը 30 տարիների ընթացքում, իբրև Մելպօմենայի տաճարի համեստ քուրմերից մէկը, հաւատարմօրէն ծառայել է հայ գեղարուեստին, այդպիսով բերելով իր դուգնաքեայ նուէրը նուիրական գործին։

Միթէ կասկածի ենթակայ է այն հանգամանքը, որ մեր բոլոր գործիչները, սրանց թւում, անշուշտ, նաև Զաբէլը, այդ երկարատև և տանջալի տարիների ընթացքում տարել են անհամար և բազմակողմանի զրկանքներ, չը դաւաճանելով սակայն հայ ժողովրդի վերածնութեան վեհ գործին։

Խիստ ցաւալի, բայց մերկ իրողութիւնն է այդ։

Փաստ և ակներև ճշմարտութիւն է, որ հայ ժողովուրդը դեռ ևս չէ հասել քաղաքակիրթ ազգերի այն բաղձալի հասունութեան և ինքնաճանաչութեան, որպէսզի կարողանայ իր առաջադիմութեան և ազգային վերածնման գործին նուիրված սակաւաթիւ զինուորներին նիւթապէս ապահովել, որպիսի հանգամանքը առիթ է տալիս հասարակական գործին նուիրված մշակներին գէթ մասամբ ապահովելու նպատակով՝ յոբելեանների ժամանակ առաջ բերել նաև այդպիսիների նիւթական, գէթ մասնակի ապահովման խնդիրը, ի տրիտուր տասնեակ տարիների քրտնաթոր աշխատանքի։

Եւ ահա տ. Զաքէլի, այդ շիտակ և անվհատ աշխատաւորի, 30-ամեայ բեմական գործունէութեան առիթով նրան յարգողները որոշել են կազմակերպել յոբելեանական ներկայացում և համեստ տօնախմբութիւն, վարձահատոյց լինելու բեղմնաւոր վաստակաւորին։

Արդ՝ ինչ է մնում անել հայ հասարակութեանը և նրան յարգողներին, եթէ ոչ իր առատ նուէրներով խրախուսել անխոնջ աշխատաւորին, որպէսզի նա այսուհետև ևս նոյն թափով և աւիւնով կարողանայ ծառայել իր սիրած բեմին։

Կատարենք մեր հասարակական պարտքը, անմիջապէս դիմելով գործի։

Յար. Գասպարեան

ԿԵԱՆՔԻ ԹԱՆԳՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 6-ի երեկոյեան Մոսկվայի Տեխնիքական Ընկերութեան մէջ Կ. Ա. Պաժիտով կարդաց մի հետաքրքրական զեկուցում «Կեանքի թանգութիւնը Արևմուտքում և Ռուսաստանում և կռւի միջոցները դրա դէմ» վերնագրով։ Զեկուցանողը մի քանի հետաքրքրական փաստեր բերեց կեանքի թանգութեան մասին Արևմուտքում և Ռուսաստանում։ Արևմուտքում կենսական մթերքների թանգութիւնը ընթանում էր ալիքաձև, երբեմն բարձրանալով, երբեմն իջնելով, իսկ Ռուսաստանում գների թանգանալը ընթանում է անընդհատաբար։ Վերջին 100 տարիների ընթացքում առաջին անհրաժեշտութեան արդիւնքների գները անսովոր կերպով աճեցին։ Օրինակ, 50-ական թւականներին Մոսկվայում հացի պուդը արժէր 42 կոպ., իսկ ներկայումս նրա գինն է 1 ր. 5 կ.-ից մինչև 1 ր. 15 կ., իսկ միսը Պետերբուրգում 50-ական թւականներին արժէր 2 ր. 70 կ. պուդը, այժմ—6 ր. 20 կ., հաւը XIX դարի սկզբում կարելի էր գնել 5 կոպէկով, իսկ այժմ նրա գինը աճել է 14—15 անգամ, փայտի մի սաժէնը արժէր 70 կ., գարու մի չէտվէրտը—80 կ., մի շիշ գարեջուրը—2 կոպէկ։ Սակայն ամենից շատ թանգացել են բնակարանները։ Հարիւր տարի առաջ 20 ռուբլով վարձում էին 8—10 սենեակ ունեցող բնակարան ամենալաւ փողոցում, իսկ այժմ այդ գնով դժուար է մինչև անգամ մի վայելուչ սենեակ ունենալ։ Զեկուցանողը կեանքի թանգանալու պատճառ համարում է հողային րէնտայի անսովոր աճումը, ֆինանսական մաքսային քաղաքականութեան ազդեցութիւնը, պետութեան պրոտէկցիօնիզմը և սպառողներին շահագործելը միջնորդների ձեռքով։ Նորերս Ամերիկայում պարզվեց, որ ագարակատէրը ստանում է իր արդիւնքի համար նրա արժողութեան 80%-ը, թռչնապահը—50%, կաթնավաճառը 43%, ամենից շատ վնասվում են բանջարանոցների տէրերը և այգետէրերը։ Նրանք միայն ստանում են ընդամենը 20%։ Դրա դէմ կռւելու միջոց, զեկուցանողի կարծիքով, կարող է լինել ֆինանսական և մաքսային սիստեմի բարենորոգումը և մանաւանդ կռիւը քաղաքային վարչութիւնների շնորհով առևտրի մէջ մտած անկանոնութիւնների դէմ։ Բացի դրանից նա առաջարկում է, որ իրանք սպառողները կօօպէրատիվ ընկերութիւններ կազմեն։ («Р. В.»)

ԴՊՐՈՑԱԿԱՆ-ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՖՕՆԴ

Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. յօգուտ դպրոցական-ուսուցչական ֆօնդի ստացել է. Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսէսեանից 25 ր., Ե. Շահնազարեանից 25 ր. հետևեալ նամակով՝ «1893 թ. Կ. Հ. Բ. Ընկ. նպաստում էր մի խումբ անձանց՝ ուսուցչական արտօնութիւն ձեռք բերելու և այդ գործի համար ծախսել է բաւական գումար։ Լինելով դրանց մէջ և ես և հաշւելով, որ իւրաքանչիւր անդամի վրա Ընկերութիւնը ծախսել է մօտ 25 ր., այսօր օգտվելով յոբելեանից, ես վերադարձնում եմ այդ գումարը շնորհակալութեամբ հանդերձ յօգուտ «Դպրոցական-ուսուցչական» ֆօնդի»։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

ՃԱՌԵՐԸ ՄԵԶ ՓՐԿԵՑԻ՞Ն

Ինչ կարգ կանոն ուզես դիր,
Բայց այս ալ աղէկ գիտցիր,
Որ եթէ կարգն ու օրէնքը
Անխղճմտանք մարդկանց ձեռք են,
Ամեն ատեն ու ամենքը
Ո՛ր գին ուզեն կը դարձնեն։

Կռիլօվ

Զարմանալի և տարօրինակ ազգ ենք հայերս։ Մեզ համար չը կայ ոչ պատմութեան դաս, ոչ ուրիշ ազգերի օրինակ, ոչ անցեալ և ոչ ներկայ... Մենք ենք, որ կանք. ինչ փոյթ, թէ միշտ սխալ ենք գործում. և թէև յետոյ մեր սխալը տեսնում ենք, նրա տուած հարուածն էլ զգում մեզ վրա, բայց և այնպէս նորից շարունակում սխալներ անել... մի տարօրինակ տիպար... ազգութիւնների մէջ։

Այժմ Թիւրքիայի դրութիւնը, կարծես, մտնում է մի նոր շրջանի մէջ։ Քաղաքական ամպերը վաղուց կուտակվել էին այդ երկրի գլխին և մի օր այդ ամպերից պէտք է գոռում-գոչում լսվէր... Իտալիայի պատերազմը Տրիպօլիսի պատճառով, կարծես թէ մի զարհուրելի և ոչ նպաստաւոր նախօրեակ է պատրաստում Թիւրքիայի համար։ Եւ սա շատ հաւանական է, որ մի դառն և ծանր ողբերգութեան սկիզբը լինի։

Թիւրքիայի նախկին հպատակները և վասալները վկաներ են, որ սրում են, վաղուց է, որ ամբարում են... իսկ սառնաբէն և գործնական Եւրոպան չէզոքութեան կնիքը իբր թէ իր շրթունքների վրա դրել Զաքարիայի նման պապանձվել է, նայում է, նայում... ով գիտէ ինչ դրութիւն է, արդէն նախատեսած։

Բեռլինի վեհաժողովը Թիւրքահայերի դրութիւնը բարելաւելու նպատակով իր ժամանակ մտցրեց Բեռլինի դաշնագրի մէջ յայտնի 61-դ յօդուածը, որը երբէք և չիրագործվեց։ Եւրոպական պետութիւնները՝ բացի մխիթարական, մի-մի անգամ էլ համակրական խօսքերից՝ ուրիշ ոչինչ չարին Թիւրքահայերի տառապանքները և մարտիրոսական չարչարանքներն ու տանջանքները թեթևացնելու կամ դրանց իսպառ վերջ դնել տալու համար։ Եւրոպայի զանազան քաղաքներում շատ ճառեր արտասանվեցին, գուցէ այդ ճառերի բառերի տառերը աւելի շատ են եղել, քան հարիւր հազարաւոր Թիւրքահայերի մարտիրոսական չարչարանքների մէջ թափած արիւնի կաթիլները... Ինչ օգուտ դրանցից ստացվեց... Հայ այրիացած կինը իր տան պահապան ամուսնու կտոր-կտոր արված դիակի առաջ հառաչելով ողբում էր իր բռնաբարված աղջկան... Այդ եւրոպական ճառերը նոյնանման ոճիրների առաջը առնել կարողացա՞ն։ Հայ գիւղերը մատնված էին կրակի, թալանի, եկեղեցիները պղծված. եւրոպական ճառերը դրանց առաջը առնել կարողացա՞ն։ Բիսմարկը գոռոզութեամբ ասում էր և ամենից աւելի անգամ կրկնում, որ նա մի հատ գերմանացի զինուորի կեանքը չի զոհի Արևելքի ազգի (հայ) փրկութեան համար... Իսկ հայը ճառերի վրա էր յոյս դնում։

Այժմ ամեն տեղից շատ որոշ սիմպտոմներ և շշուկներ քաղաքական աշխարհում գալիս են Թիւրքիայի բաժանման հարցը կարծես ի կատար ածելու։ Եթէ իսկապէս բաժանում կայանայ մօտ ապագայում, ինչ է լինելու Թիւրքահայերի վիճակը. արդեօք բարելաւվելո՞ւ է թէ աւելի վատթար մի դրութիւն է ստեղծվելու նրանց համար։

Ո՞վ կարող է գուշակել, ո՞վ կարող է երաշխաւորել։

Թիւրքիայի վիճակը Աբդիւլ-Համիդի օրօք անտանելի էր, դժոխային։

Երիտասարդ-Թիւրքերի նոր սահմանադրութիւնը, ինչպէս երևում է, սպասված չափով չը բարւոքեց այդ դրութիւնը։

Սահմանադրութեան անդրանիկ օրերը Թիւրքահայոց համար բերին Ադանայի ջարդը։

Թիւրքահայը նորից գանգատվում է—և ամենայն իրաւամբ—իր վիճակից։

Եթէ Թիւրքիան բաժանման ենթարկվի, ինչ դրութիւն պիտի ստեղծվի Թիւրքահայերի համար՝ այսօր գուշակել դժուար է։ Քաղաքականութիւնը մի այնպիսի բան է, որին հաստատ հաւատ ընծայել չէ կարելի։

Մի որևէ ազգի գործը կարծես արդէն հասնում է իր բարեյաջող վախճանին, մէկ էլ մի անսպասելի նոր հանգամանք է գալիս միջազգային աշխարհից, և տեսնում ես, որ բոլորովին հակառակ արդիւնքների հասցրեց։

Եւ որովհետև այսպիսի հանգամանքներ միշտ լինում են, Թիւրքահայերն էլ Թիւրքիայի այժմեան կատարվող գործերին պիտի տան ահագին նշանակութիւն և շատ աչալուրջ գտնվեն և պատրաստ ամեն նրա պատահարներին։

Մի ամբողջ ազգի գոյութեան հարցում պէտք է շատ հեռատես և զգոյշ լինել։

Պէտք է լաւ կշռել ժամանակը։

Սակայն ո՞վ պիտի լինի ղեկավարը, ո՞վ պէտք է մի այսպիսի մեծ և ծանր հարցի գլուխն անցնի և այդ հարցը կարողանայ լուծել շահաւէտ կերպով։ Մեր հոգևոր պետերը—կաթողիկոսը՝ իբրև ամենայն հայոց հոգևոր գլուխ և Կ. Պոլսի պատրիարքը՝ իբրև պաշտօնապէս ընդունված պետ — պէտք է այս հարցը և սրա նման ծանրակշիռ հարցեր իրանց հոգատարութեան առարկայ դարձնեն։ Նրանք իրանց ուխտի մէջ երդվում են հաւատարիմ մնալ ազգի շահերին և պաշտպան լինել այդ շահերին... Ուրեմն սա նրանց իսկական պարտականութիւնն է։

Այս անգամ ուրեմն նոր ընտրելի կաթողիկոսը միանգամայն դժուար պարագաների և պայմանների հանդէպ է լինելու կանգնած, և նրանից պահանջելու է ազգը ոչ միայն «հաս ու չհասի» թոյլատուութիւն, այլ և գուցէ Թիւրքահայերի «լինել չը լինելու» հարցի վճիռը։

Եթէ այսպէս լինի, մեր՝ այժմս հրապարակում դրված կաթողիկոսական ընտրելիներից ո՞րը կարող է համապատասխան լինել՝

Սուրէնեանը,
Մեսրոպ եպիսկոպոսը,
Կարապետ եպիսկոպոսը,
Մանկունին,
Պարգևեանը,
Օրմանեանը։

Բժ. Արտաշէս Շխեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Ղզըլ-Արվադ, 25 սեպտեմբերի

Ասխաբադի շրջանային դատարանի սեսսիան, գալով այստեղ, ամսիս սկիզբներին քննեց մի շարք գործեր, որոնց մէջ առանձին հետաքրքրութիւն էր շարժել և դատաստանական դահլիճ գրաւել ահագին բազմութիւն հետևեալ գործը։

Անցեալ 1910 թ. յունիսի 25-ին Ղզըլ-Արվադից Ասխաբադ մեկնող պօստատար-մարդատար գնացքը ենթարկվեց՝ շպալները գետնի մէջ խրվելուց՝ խորտակման, պատճառելով 25—30 մարդկային անմեղ զոհեր։

Այդ առիթով դատական իշխանութիւնը, հիմնվելով յատուկ նշանակված մասնագէտ-էքսպէրտների եզրակացութեան վրա, մեղադրանքի էր ենթարկել յիշեալ գծի 3-րդ մասի գլխաւոր շտաբս-կապիտան Գրենեօվին պատժագրքի 1085-րդ յ. 2-րդ և 3-րդ մ. մ., իսկ մեքենավարին, ճանապարհի վարպետին և աւագ-բանուորին նոյն յօդուածի 2-րդ մ. հիման վրա։ Կանչված էին մեծ թւով ռուս և թիւրքմէն վկաներ, որոնց հարցաքննելը տևեց մի ամբողջ օր։ Մեղադրեալներին պաշտպանում էին երեք փաստաբաններ, որոնց մէջ և յայտնի երդ. հաւ. Բեկօվ՝ Բագուից։

Երկրորդ օրը, մեղադրեալների բացատրութիւնները, պաշտպանների և դատախազի ճառերը լսելուց յետոյ դատաւորները ցերեկվայ ժամը 4-ին առանձնացան խորհրդակցութեան։

Երեկոյեան ժամը 9-ին դատարանը դուրս բերեց հետևեալ վճիռը. շտաբս-կապիտան Գրենեօվին, ճանապարհի վարպետին և աւագ բանուորին ճանաչելով յանցաւոր իրանց պարտքի և պաշտօնի մէջ անհոգ և զանցառու գտնվելու և առ այդ մարդկային դժբաղդութիւն պատճառելու մէջ, դատապարտում են բանտարկութեան, առաջինը 2 ամսով, երկրորդը 6 և երրորդը 4 ամսով, իսկ մեքենավարին ճանաչել անմեղ, քանի որ ժամանակին նշան (СИГНАЛЪ) չէ տրվել գնացքը իսկոյն կանգնեցնելու։

Այլ և դատարանը որոշեց բաւարարութիւն տալ մի հայ բանուորի պահանջին, որի ոտքը վնասվել էր այդ դէպքից։ Նա գանձարանից ստանալու է 3500 ր. այս մի տարվան տոկոսիքով հանդերձ։

Մենտոր-Միրաժ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Գանձակի նահանգից, որ գնացել էր վերջին օրերս որսի, վերադարձաւ Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվը։

◆ Երկուշաբթի, հոկտեմբերի 10-ին կայացած իր նիստում քաղաքային դուման, ի թիւս զանազան որոշումների, որոշեց նաև 2 դեսեատին մի գետին յատկացնել Նաւթլուղի քաղաքապատկան հողերից արդիւնաբերական-տեխնիքական այն դպրոցի շինութեան համար, որ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն մտադիր է բանալ Թիֆլիսում։ Այդ դպրոցի շինութեան և կահաւորման ու յարդարման ծախքը հաշւած է մօտ 200,000 րուբլի։ Թէև հոգաբարձուն խնդրել էր դումային յատկացնել և դրամական նպաստ, և դումայի ուսումնարանական յանձնաժողովը առաջարկել էր յատկացնել 10,000 ր., բայց դուման գտաւ, որ 10,000 ր. շատ չնչին գումար է անհրաժեշտ 200,000 ր. գումարը ունենալու համար, իսկ աւելին յատկացնել՝ չունի միջոց, ուստի և որոշեց դրամական միջոց չը տալ, այլ տալ միայն 2 դեսեատին հող, որ առնուազն կարժենայ 40—45,000 րուբլի։

◆ Վաղը, հինգշաբթի, երեկոյեան ժամը 8-ին, Բօրսայի դահլիճում, ինչպէս մեզ հաղորդում են, կայանալու է մասնաւոր խորհրդակցութիւն, որ գումարվում է մի խումբ անձանց նախաձեռնութեամբ՝ կաթողիկոսական հարցի մասին։ Մեզ խնդրում են յայտնել, որ հրաւէրները անուանական են։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան զինուորակոչական ատեանում հոկտեմբերի 15-ից կը սկսվեն երիտասարդ զինուորացուներին զինուորական ծառայութեան կանչելու գործողութիւնները։ Յանձնաժողովի նախագահն է քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, անդամներն են՝ զինուորական վարչութեան կողմից գնդապետ Ժգենտի, ոստիկանութեան կողմից 9-րդ ոստիկանատան պրիստաւի օգնական Լաբիանի, քաղաքային դումայի կողմից Մ. Քանանեան, Գ. Թամամշեան, քաղաքային բժիշկ Զելնեցկի և զինուորական բժիշկ Վասիլօվ։

◆ Սկսվել են նախնական պատրաստութիւններ ռուս բժիշկների և բնագէտների XIII համագումարի համար, որ կայանալու է Թիֆլիսում դեկտեմբեր ամսին։

◆ Ընթացք է տրված Կօջօրից Թիֆլիս երկաթուղագիծ անցկացնելու նախագծին։ Երկաթուղու ներկայացուցիչներն են ինժեներներ Կօգնովիցկին և Մարգարեանը։

◆ Կ. Հ. Բ. Ընկերութեան խորհուրդը ստացել է Քարվանսարայի ծխական վարչութիւնից մի գրութիւն, որով յայտնվում է թէ՝ վարչութեան նախաձեռնութեամբ ամսիս 2-ին Ընկերութեան 30-ամեայ գոյութեան առիթով Քարվանսարայում կայացել է շրջանային 9 գիւղերի հոգաբարձական և ուսուցչական խմբերի միացեալ ընդհանուր ժողով, որտեղ միաձայն ընդունվել է արձագանք տալ խորհրդի որոշած յոբելեանին և ամեն կերպ ջանալ նպաստել և մասնակից լինել նրա գոյութեան և հաստատման օգտակար գործին. ուստի ամեն մի դպրոցին կից կազմվել են հանգանակիչ մասնաժողովներ, վարչութեան գլխաւորութեամբ, որոնք հանգանակած գումարները մինչև նոյեմբերի 1-ը կուղարկեն վարչութեան, իսկ վերջինն էլ կը փոխադրի խորհրդին։

◆ Այս օրերս Փոխարքային ներկայանալու է Քութայիսի ազնուականութեան պատգամաւորութիւնը, որ խնդրելու է Սև ծովի երկաթուղու գիծը անց կացնել Քութայիս քաղաքի միջով։

◆ Հոկտեմբերի 10-ին Թիֆլիսի երկաթուղային տեխնիքական դպրոցի 2-րդ դասատան աշակերտ Կրուպենկօն հրացանով փորձել է սպանել նոյն դպրոցի ուսուցիչ Պապկօվին, բայց սա վարպետօրէն շրջել է և գնդակը վրիպել է։ Յանցաւորը կալանաւորված է։

◆ Հոկտեմբերի 8-ին կալանաւորվեց երկաթուղային վարչութեան հաշւապահական բաժնի գլխաւոր հաշւապահ Շմատկօվը, որի անունը կապված է մի շարք զեղծումների հետ։

◆ Կովկասեան արքունի հանքային ջրերի վարչութիւնը ենթարկվելու է արմատական փոփոխութեան, որի մասին և յատուկ օրինագիծ է ներկայացված Պետական Դումային։

◆ Այս օրերս Մոսկվայում, մասնագէտ անձերի մասնակցութեամբ, կայացաւ մի խորհրդակցութիւն շերամապահութեան զարգացման միջոցների մասին։ Ի միջի այլոց այդ խորհրդակցութեան միջոցին պարզվել է, որ կովկասեան շերամապահական կայարանի գործունէութիւնը պէտք է տանել այսուհետև բոլորովին նոր հիմքերով, որովհետև նրա տուած օգուտը ցայսօր եղել է ոչ-արդիւնաւոր։

◆ Երկրագործութեան գլխաւոր կառավարչի կովկասեան լիազօրի դիւանի կողմից ուղարկվում են Կարսի նահանգը կաթնատնտեսութեան ինստրուկտոր Ս. Թամամշեան և նրա վարպետ Լ. Զաաֆեան։ Աշխատանքները տևելու են 1½ ամիս։

◆ Հոկտեմբերի 20-ին և 29-ին Թիֆլիսի հեռաւոր մասում (Կուկիայի գերեզմանատան շրջանում) լինելու է փորձնական թնդանօթաձգութիւն, որի մասին յայտարարվում է այդ կողմերի ազգաբնակութեան։

◆ Հոկտեմբերի 17-ին Արքունական թատրոնում լինելու է օպերային ներկայացում յօգուտ տղայոց 4-րդ գիմնազիայի աղքատ սաների։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Արքունական թատրոնում

Կիրակի, հոկտեմբերի 9-ին, ռուսաց օպերային խումբը Պալիեվի ղեկավարութեամբ տուեց Վերդիի «Աիդա» օպերան, նոր և շքեղ դեկօրացիաներով, որի մէջ հանդէս եկաւ առաջին անգամ Ռադամէսի դերում՝ Պօլէվօյը։ Երգիչը ցոյց տուեց, որ ունի երաժշտական և շատ հաճելի տէմբր ձայն, որ սակայն տեղ-տեղ երերում է։ Աիդայի դերը երգում էր տիկին Արեշկօ, որ մեծ աջողութիւն ունեցաւ։ Շատ լաւ էր եթովպացի թագաւորի դերում Կ. Նեազինինը, որի ձայնը լիակատար հնչուն է և գեղեցիկ։ Ամներիսի դերն երգող տիկին Զալեւսկան թէև երգում էր ոգևորութեամբ, բայց տեղ-տեղ ձայնը անհաճոյ էր թնդում։ Ընդհանրապէս «Աիդան» տարվեց և երգվեց ներդաշնակ, գեղեցիկ և ներկայացումը մեծ հաճոյք պատճառեց հասարակութեան։

Երկուշաբթի խումբը ներկայացրեց «Տիկին Բատտերֆլայ» օպերան, որի մէջ տիկին Շուլգինան իր գեղեցիկ, հմայիչ և բնական խաղով ու երգով ցոյց տուեց, որ խոշոր տաղանդի տէր է։

Հ. Ա.

II

Արտիստական թատրոնում

Երկուշաբթի, հոկտ. 10-ին, հայ դրամատիկական ընկերութեան խումբը տուեց իր երկրորդ ներկայացումը։ Առաջին անգամ հայ բեմի վրա խաղացվեց նոր թարգմանական դրամա «Սէր և Մահ» անունով, որ պատկանում է հրեայ կենցաղագէտ-դրամատուրգ Յակոբ Գորդինի գրչին։

Այդ պիէսի փաբուլան համարեա թէ նման է միևնոյն հեղինակի «Սատանայի»ն։ Այնտեղ չար ոգին է հանդէս գալիս բարի ոգու դէմ, այստեղ ճակատագրական կռիւ է սիրոյ և մահվան միջև։ Երկու դէպքում էլ յաղթող է հանդիսանում դրականը. առաջինի մէջ բարի ոգին, երկրորդի մէջ սէրը։

«Սէր և Մահ» դրամայի ճշգրիտ բովանդակութիւնը հեղինակի առաջաբանն է։ Հանդիսատեսի առաջ պայքարում են մահը (Շահխաթունի) և սէրը (տ. Սիրանոյշ)։ Ընդհանուր գծերով մատնանշենք երկուստեք քարոզը.—Կեանքի վախճանը մահն է. կեանքի էութիւնը ուժեղի անհատական հաճոյքն է, և մարդիկ ապրում են մեռնելու համար. կեղծիք է մարդկային կեանքը բոլոր ապարիկվում և մահն է, որ սաւառնում է թէ բարեկամութեան, թէ դրամի, թէ ըստ երևոյթին Աստուծուց երկնչելու և թէ երկու էակների սիրոյ վախճանակէտում. անգամ ամենաեսասէր մարդու վերջը մահ է. մահը թագաւորում է ամենուրեք ու մշտնջենական։ Ահա մահվան ույժը, ահա մահվան դաւանանքը։

Ներհակ է սիրոյ իմաստը։ Կեանքը՝ սէր է. փոխադարձ ձգտումը սէր է և սէրն է, որ կառավարում է համայն տիեզերքը. կեանքի բնութիւնը հիմնված է սիրոյ վրա և իդէալական սէրը ուրիշի երջանկութեան մէջ է կայանում. մինը ընդհանուրի համար, ընդհանուրը մինի համար։ Սիրոյ վրա է հիմնված մարդկանց կեանքը, և բնութիւնը ինքը սէր է. սէրը հարկադրում է բանական էակներին ապրելու, տանջվելու ու երջանիկ լինելու, կռիւ մղելով մահվան դէմ. կեանքի էութիւնը սէրն է, մանաւանդ ընտանեկան սէրը, կիրառված ամուսնական անկեղծութեամբ և զաւակ արտադրելու տենչով։

Գորդինը իր այս ամեն փիլիսոփայութիւնը մարմնացնում է յանձին հարուստ վաճառական Շմուէլ Աշկինազի ընտանիքի։ Շմուէլը ունի երեք աղջիկ՝ Բէրտա, Իդա և Միլիա և մի տղայ՝ Յօլիա։ Նրա գործակատարն է Բերնարդը, որի չափազանց աստուածավախ հայր Շլօմէն և մայր Սառան մշտական յարաբերութեան մէջ են Աշկինազի ընտանիքի հետ. Շմուէլը տաս տարի այրի մնալուց յետոյ՝ կին է բերում երիտասարդ Սօֆիա Գրինշտէյնին, որ իր առաջին ամուսնուց ունի Նինա աղջկան։ Գործող անձերի թիւը լրանում է Բերնարդի ընկեր Ինժեներ Լիւբսով, որ աւարտելով իր ուսումը Գերմանիայում՝ մտնում է Շմուէլի մօտ պաշտօնի և ստանձնում է ջրաղացի կառավարութիւնը։

Եւ ահա մէկիկ-մէկիկ անցնում են մահի թագաւորութեան արտայայտութիւնները։ Հարուստ ու ամբարտաւան Շմուէլը տապալվում է անկարող լինելով տանել այն, որ իր մօզայական Իդա աղջիկը ամուսնանում է իրանց գործակատար Բէրնարդի հետ. մինչ լսել էր, թէ վերջինս խօսք է տուել մեծ դստերը, Բէրտային, որին բնութիւնը պատժել է ստեղծելով սապատաւոր։ Ինժեներ Լիւբսը իբրև անձնական հաճոյքների հետամուտ անձն, էլ աւելի եսասէր՝ գայթակղեցնում է Միլիային և գաղտնի կապ հաստատում նրա հետ։ Նոյն իսկ պատանի գիմնազիստ Յօլիան սիրային յարաբերութիւնների մէջ է իր խորթ մօր աղջկայ՝ Նինայի հետ։ Ապա Աստուծուց երկնչող Շլօմէն, չը նայած իր տարիքին և պառաւ կնոջ, ամեն բօպէ, կրկնելով թէ մարդու ճակատագիրը երկնքումն է գրված, չէ քաշվում ոտն ձգել դէպի դեռատի Սօֆիան, սրա ամուսին Շմուէլի մահից յետոյ...

Միով բանիւ կատարեալ լաբիւրինթոս ունայն շնչաւորների ունայն վախճանով...

Սակայն ի դիմաց ընդհանուր անապատի, սանս օազիսի նման, կանգնած է Բէրտան, բնութիւնից պատժված, սակայն սիրով տոգորված այդ աղջիկը։ Նա ամբողջովին սէր է։ Վաղաժամ զրկվելով իր քաղցր մօր գգուանքից ու խնամքից, նա իր կեանքը նուիրում է իր կրտսեր քոյրերի և եղբօր դաստիարակութեան գործին։ Նա մի տեսակ ճրագ է դառնում ու լուսաւորում նրանց խաւար ուղին։ Հասնում է կեանքի օրհասական հարուածը։ Նրան դաւաճանում է իր սիրելի Բէրնարդը և ամուսնանում է քոյր Իդայի հետ։ Թւում է, թէ Բէրտան դրանից յետոյ զոհ է լինելու նմանապէս մահվան գաղափարին, բայց ո՛չ. նա ունի անսահման կամքի ույժ և մի խորին համոզմունք, թէ ինքը ապրում է ուրիշների համար։ Իդէալական անկաշառ սիրոյ յաղթանակը ակներև է. նա փայլում է յուսահատութեան վրա, արհամարհելով կեանքի մահացու անզօրութիւնը։ Բէրտան կրկնապատկում է իր սէրը բոլոր շրջապատողների վերաբերութեամբ անխտիր...

Եւ այդ խորունկ սէրն է, որ օրինակ ու ուղեցոյց է ծառայում Բէրնարդին, մանաւանդ կրթված, բայց հոգով աղքատ ու դէպի ոչնչութիւնը դիմող Լիւբսին, որի վախճանը հէնց մահի վերջն է։ Լիւբսը վիճակ է ձգում իր և Բէրնարդի միջև, թէ ով պէտք է մեռնէ. մի թղթի վրա գրված է «սէր», միւսի վրա՝ «մահ»...

Հանգոյցը լուծվում է. վեհ սիրոյ առաջ տեղի է տալիս մահը։ Լիւբսը թէև հանում է «սէր» թուղթը, բայց նա արդէն գիտակցել էր, զգացել՝ թէ իր բովանդակ ոչնչութեամբ մեռնելու է սիրոյ յաղթանակի առաջ, իսկ այդպիսի սիրոյ տիպար Բէրտան էր, որը և սովորեցրեց Բէրնարդին սիրել անկեղծ՝ և իբրև մարդ կնոջը և նորածին զաւակին...

Լիւբսը մեռաւ, իսկ Բէրնարդը ապրեց իր սիրասուն էակներին ապրեցնելու...։

Մահը միշտ էլ յաղթված է ամենայաղթ սիրոյ հանդէպ...

Գորդինի պիէսները, պէտք է ասել, աչքի են ընկնում իրանց պարզ, հասարակ բեմադրութեամբ, որպիսի հանգամանքը առօրեայ կեանքից վերցված տիպերի բէալ արտայայտութեամբ նսեմացնում են պիէսների գեղարուեստականը։ Գորդինի երկերի մէջ չը կան ընդհանրապէս հոգեբանական բարդ բռնկումներ և ամբողջացրած կենտրոնական մարտիկներ։ «Սէր և Մահի» մէջ էլ իսկապէս չը կայ մի ամբողջացած դրամա իր դրամատիզմով. բայց կան հարազատ գծեր տիպերի ուրոյն ձևակերպութեամբ, որոնց հիւսուածքը պսակվում է սիրոյ յաղթանակով։

Գալով խաղին՝ նկատելու ենք, որ Աբէլեանի նման դերասանական ոյժը «Սէր և Մահի» մէջ աննշան կատարում ունէր, որով և Շմուէլի դերը զրկեց մեզ տաղանդաւոր դերասանից գեղարուեստական բաւականութիւն առնելու մի առիթից, որպիսին յատուկ է Աբէլեանին համապատասխան խոշոր դերերին։

Տիկ. Մայսուրեան անպայման լաւ տարաւ Բէրտայի դերը։ Դերասանուհին ըմբռնել էր իր դերի դժուարութիւնը, որ երևան է գալիս ներքին փոթորկումներով և սիրոյ վսեմ զգացմունքը իր մէջ անընդելով։

Վատ չէր օր. Ադամեան իբրև Իդա. այդ դերը սազում էր նրան։ Սկզբում կենսունակ, անզարդ աղջիկը վերջում փոխվում է մի տիկնոջ, որի պրետենդենտներն են երկու տղամարդ, մինը ինչպէս պաշտօնական ամուսին, միւսը ինչպէս սիրահար։ Սակայն Իդայի մէջ վերջ ի վերջոյ յաղթանակում է մայրական սէրը։

Ալիխանեան շնորհալի դերասան է. նա առհասարակ բեմ ելնելուց առաջ այսպէս ասած մարսում է իր դերը. երևում է, որ ունի շկօլա. միայն ջանալու է աշխուժել իր դիկցիան, որ կաղում է բռնկման բոպէներին։

Աւետեան և տ. Զաբէլ շատ լաւ էին, բայց առաջինը խուսափում է տեղ-տեղ խաղի մէջ շարժ մտցնելուց, իսկ տիկինը հոգալու է իր խռպոտ ձայնը պարզելու։

Գոհացուցիչ էին օր. Խանդանեան, Ժամմին, Ալիխանեան II։

Տիկ. Ցասմիկի նկատմամբ մենք յոռետես ենք գտնում պատասխանատու դերերի հարցում։ Տիկինը ունի, իրաւ, բեմական ընդունակութիւն, սակայն նրա մէջ չը կայ ստեղծագործական թել, որի փոխարէն մի-օրինակութիւնը ծուլացնում է իր յանձն առած դերերի տպաւորութիւնը։ Ռեժիսեօրի առանձին ուշադրութիւնն ենք հրաւիրում տիկնոջ այդ մինուսի վրայ, առաւել կարևոր դէպքերում։

Առաջաբանի մէջ տիկ. Սիրանոյշ, ճըշմարիտը պէտք է ասել, մեզ չը մխիթարեց։ Տաղանդաւոր յարգելի պրեմիէրշան առհասարակ աննման է այնտեղ, ուր յաջորդական խաղի զարգացման մէջ հայրենասիրական ու դիմադրական գործողութիւններ են կատարվում սիրոյ ուժեղ թափով, լեզուի յստակութեամբ, շարժումների խրոխտ ու ազատ գործադրութեամբ, մանաւանդ բռնկման կորովով։

Շահխաթունին դժգոհելու առիթ պէտք է տար Սևումեանին, որ նրա դերը ինքն էր յանձն առել այդ գիշեր, սակայն դրա փոխարէն նա իբրև Լիւիս շատ օրինակելի էր, իր տեղում էր։

Թատրոնը լի էր. ներկայացումը վերջացաւ 12-ից անց։ Ե.

ՄԱՄՈՒԼ

Մենք ցոյց տուինք երէկ «Հորիզոն» թերթի կեղծիքը, թէ ինչպէս ժողովրդական և առաջադիմական սկզբունքների դիմակի տակ աշխատում է առաջ քշել մի եկեղեցականի կանդիդատութիւնը, որ իր պաշտօնավարութեան ամբողջ ընթացքում հակառակ է եղել այդ սկզբունքներին։

Երէկվայ համարում (№ 223) «Հորիզոնը» նորից մի կեղծիք է կատարել։ Խօսելով Գր. Արծրունու վերաբերմունքի և գրած յօդուածների մասին Օրմանեանի վերաբերմամբ, նա յայտարարում է, թէ նրա համախոհները այժմեան «Մշակի» մէջ կաթողիկոսական փառաբանվող թեկնածուների շարքում դրել են Օրմանեանին և Կարապետ եպիսկոպոսին։

Սա կատարեալ և անամօթ ստախօսութիւն է, որպիսին թոյլ է տուել իրան «Հորիզոնը»։ Եթէ «Մշակը» իր էջերը բաց է արել կաթողիկոսական թեկնածուների թէր և դէմ քննադատութեան համար, դա մի՞թէ նշանակում է, թէ նա դրանց իր ընտրելիներն է համարում։ Թող «Հորիզոնը» բարի լինի ցոյց տալ, թէ երբ է «Մշակը» իր կողմից առաջարկել Օրմանեանի և Կարապետի կանդիդատութիւնը։ Եթէ «Հորիզոնը» ի նկատի ունի, որ մենք տպել ենք յօդուածներ և ի պաշտպանութիւն Օրմանեանի, Կարապետի, մի՞թէ մամուլի կոչումը գնահատող և նրա բարձրութեան վրա կանգնող մի օրգան կարող էր այլ կերպ վարվել։ Չէ՞ որ du choc des opinions jaillit la vérité. Կարծիքների ընդհարումից բղխում է ճշմարտութիւնը։ Կարելի էր նրանից աւելի խիստ յօդուածներ տպել, քան էին Մելեանի յօդուածները Օրմանեան արքեպիսկոպոսի և Մատթէոս վ.-ի յօդուածները Կարապետ եպիսկոպոսի մասին։ Իրաւունք ունէր «Մշակը», իբրև հասարակական օրգան, մերժել տպելու յօդուածներ և ի պաշտպանութիւն այդ եկեղեցականների։ Չէ՞ որ մենք տպեցինք յօդուածներ և Սուրէնեանի մասին թէր և դէմ և նոյնիսկ այսօր տպում ենք մի նամակ ի պաշտպանութիւն Սուրէնեանի։ Եթէ «Հորիզոնը» հարկ է համարում տպել Գր. Արծրունու կարծիքը Օրմանեանի դէմ, ինչու՞ հարկ չէ համարում տպել Գր. Արծրունու ժամանակ գրված յօդուածները Սուրէնեանի դէմ։

Փաստերը կեղծելով, վերագրելով հակառակորդին այն, ինչ որ նա չէ ասել, դրանով «Հորիզոնը» ցոյց է տալիս, թէ բարոյական անկումը որքան խոր ակօսներ է փորել նրա շարքերի մէջ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 2 հոկտեմբերի

Երուանդ Տէր-Մինասեանի «Առաջիկայ հայրապետական ընտրութիւնների առիթով» յօդուածի մասին, որը զետեղված էր «Մշակի» № 203-ի մէջ, պարտք եմ համարում տալու իմ դիտողութիւններս և պարզաբանելու այն թիւրիմացութիւնները, որոնք գիտակից թէ անգիտակից կերպով մտել էին հայրապետական գահի համար ընտրելի թեկնածուներից մէկի՝ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի կենսագրական տեղեկութիւնների մէջ։ Առհասարակ, մէկի իրական պատկերը, կամ հայ հասարակութեանը մատուցած ծառայութիւնը երևան հանելու համար՝ անշուշտ հարկաւոր են ճըշմարիտ տեղեկութիւններ, որպէսզի վիրաւորված չը լինեն մէկի կամ միւսի զգացմունքները կամ պատիւը։ Վերոյիշեալ յօդուածի մէջ չէր պահպանված այդ սկզբունքային խնդիրը, որ աչքի է ընկնում նամանաւանդ կաթողիկոսական հարցով հետաքրքրվողների մօտ։

Խնդիրը կայանում է հետևեալում.

Երուանդ Տէր-Մինասեանը, դնելով Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի թեկնածութիւնը հայրապետական գահի համար, ասում է, որ «Գէորգ սրբազանը դուրս է եկել գիմնազիայի Ե. դասարանից, ինքնաշխատութեան սէր չունենալով, ուստի նա չի կարող ըմբռնել ժամանակի ոգին»։ Այս բանին վկայ է կոչում 1881 թ. վախճանված Վահան վարդ. Բաստամեանի ձեռագիր յիշատակարանը։ Բայց չէ՞ որ միայն պարապ և որոշ տեսակ մարդկանց զբաղմունքն է յիշատակարաններ գրելը՝ ուրիշներին վատաբանելու և իրանց չունեցած արժանիքը գովելու համար։

Գէորգ արքեպիսկոպոսը ոչ թէ գիմնազիայի Ե. դասարանիցն է դուրս եկել, այլ եօթն-դասարանեան գիմնազիայի շրջանաւարտ է, որին պարզ ապացոյց կարող է ծառայել իր ստացած 1871 թ. № 608 աւարտման վկայականը, իսկ տարակուսանքի դէպքում կարելի է ստուգել Ս. կլասիքական գիմնազիայի արխիվում։ Նրա երկարամեայ պաշտօնավարութիւնը դպրոցական և վարչական ասպարէզում և կրկնակի տեղակալութիւնը ապացուցանում են, որ Գէորգ սրբազանը ժամանակի ոգին ըմբռնած և գիտակից հոգևորական է։

Երուանդ Տէր-Մինասեանը թուելով սրբազանի պաշտօնավարութիւնը Ալէքսանդրօպօլում, Երևանում, Աստրախանում և Թիֆլիսում, ասում է, որ նա «մնայուն գործ չէ կատարել, ոչ մի տեղ չէ կարողացել իր հօտի համակրութիւնն ու վստահութիւնը գրաւել», որպէս թէ Թիֆլիս քաղաքը արժանի չը համարեց Գէորգ արքեպիսկոպոսին փառքով ու պատիւներով հրաժեշտ տալու, ինչպէս այդ արեց Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանցին։

Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանցը ուր պաշտօնավարել է, ժողովրդի գիտակից մասը մատուցել է նրան՝ իրան արժանաւոր յարգ ու պատիւ։ Խօսենք փաստերով. օրինակ՝ 1878 թ., երբ նա Ագուլիսի ս. Թովմայի վանքի վանահայրութիւնից ու տեղական դպրոցների տեսչութիւնից հրաժեշտ տալով գնում էր Ալէքսանդրօպօլ փոխանորդ, ամբողջ հայ հասարակութիւնը ոտքով ուղեկցեց մինչև Ներքին-Ագուլիս, որին վկայ են ագուլեցիք։ Նոյնը եղաւ, երբ նա 1887 թ. Երևանից պէտք է տեղափոխվէր Աստրախան։ Երևանի ամենաընտիր հասարակութիւնը բազմաթիւ կառքերով ճանապարհ դրեց մինչև Քանաքեռ գիւղը, որտեղ հրաժեշտի ճաշ տրվեց և «Էր հեռանաս» յայտնի երգը երգելով ճանապարհ դրեց Գէորգ սրբազանին։

Թիֆլիսի առաջնորդութիւնից հեռանալու պատճառով քաղաքի պատուաւոր և առաջնակարգ վաճառականների և բազմաթիւ ընտիր քաղաքացիների կողմից Գէորգ արքեպիսկոպոսի պատւին տրվեց ճոխ հացկերոյթ, բարի ճանապարհ մաղթելու իրանց սիրած առաջնորդին. և այդ տեղի ունեցաւ ամառային ժողովարանի դահլիճում 1901 թ. սեպտեմբերի 9-ին, որտեղ ընդունվեց սրբազանը քաղցրահնչիւն «Ուրախ լեր, ս. եկեղեցի» եռաձայն շարականով. այստեղ ի դէպ է նկատել իբրև յիշողութիւն, որ հասարակութեան հրաւէրով երգում էր ճաշկերոյթին քառաձայն խումբ, տողերիս գրողի ղեկավարութեամբ։ Ապացոյց խօսքիս ճշմարտութեանը ծառայում է՝ խմբանկարը և թանգագին ընծաները, նոյնպէս և թանգարժէք նմիփարան, որոնք նուիրվեցին նոյն օրը սրբազանին, իսկ քահանայական դասը մատուցեց մի շքեղ ալբոմ ընտիր նկարներով զարդարված և ուղերձ։ Չեմ կարծում, որ Երուանդ Տէր-Մինասեանը կարողանար յիշել, թէ իր ջատագովածներն արժանացած լինէին նմանօրինակ փառք ու պատւի։ Երուանդ Տէր-Մինասեանը գրում է, որ Գէորգ արքեպիսկոպոսը «մնայուն գործ չէ կատարել»։ Նա խաղաղութեամբ կառավարել է իրան յանձնված հօտը և պարտաճանաչութեամբ և եռանդով կատարել է իր վրա դրված վսեմ հոգևոր պաշտօնը։ Նրա մնայուն գործերից որպէս օրինակ յիշենք, որ նրա օրով Ալէքսանդրօպօլում հիմնվեցին ս. Աստուածածին աւագ եկեղեցին և վիճակային կամ այժմեան ս. Փրկչի շինութիւնը։ Մի՞թէ սա յիշատակութեան արժանի գործ չէ արդեօք։

Աստրախանի պետական դպրոցներում կրօնի և հայոց լեզուի դասերը պարտաւորական դարձնելուց յետոյ՝ մի խոշոր գումար էլ հանգանակելով դրեց բանկը, այնտեղի ս. Աստուածածին եկեղեցու անունով, որպէսզի տոկոսիքը տրվի ուսուցիչներին որպէս ռոճիկ։ Նա առաջնորդարանի անունով ձեռք է բերել 60 դեսեատին հող, որի արդիւնքը մինչև օրս էլ ստանում է Աստրախանի կոնսիստորիան։

Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու ներքին և արտաքին վերանորոգութիւնը Գէորգ սրբազանի «մնայուն գործերից» մէկն է։

Մայր Աթոռը հանգուցեալ Մկրտիչ կաթողիկոսի վերջին տարիներում և նրա մահվան ժամանակ մատնված էր սարսափելի դրամական անմխիթար դրութեան և ահագին պարտք ունէր պետական բանկում՝ հիմնական արժեթղթերի գրաւանով։ Գէորգ սրբազանի խնայող և բազմակողմանի հեռատեսութեամբ և խնայող տնտեսութեամբ իր կրկնակի տեղակալութեան ժամանակ ոչ միայն հնարաւոր դարձաւ այդ պարտքը վճարել, այլ և աւելի քան 40,000 ր. տոկոսաբեր թղթեր գնվեցին։ Այժմ գանձարանը աւելի քան աջող դրութեան մէջն է։

Մայր տաճարի վերանորոգութեան և, եթէ կամենում էք, վեհարանի շինութեան նախաձեռնութիւնը Գէորգ արքեպիսկոպոսին է պատկանում։

Եթէ չէր եղել Գէորգ սրբազանը, Մայր Աթոռը չէր ունենայ մատենադարանի ներկայ շէնքը։

Անուրանալի ճշմարտութիւն է, որ Գէորգ սրբազանը, իբրև արթուն դէտ, հսկում է թէ իր տեղակալութեան և թէ սինօդի գործավարութեան ընթացքին, որպէսզի շեղումներ կամ հակաօրինական թերութիւններ չը լինեն։

Իբրև անկուսակցական և արժանի՝ հոգևոր կոչման վեհ գաղափարին, իրան դիմողներին, ինչ հովերով էլ տարված լինեն, ամենամատչելի կերպով լսում է և կարեկցաբար բաւարարութիւն տալիս։

Միանգամայն սխալ է և թշնամութեան արդիւնք եթէ ասենք, որ Գէորգ սրբազանը թոյլ բնաւորութեան և ուրիշների ազդեցութեանը ենթարկվող մարդ է։ Նա յարգում է խորհրդակցութիւն ասած խօսքը և արժանի մարդոց հետ խորհրդակցում է կարևոր դէպքերում, բայց որոշ խնդիրներում նա խորհրդի կարիք չէ զգում, իբրև փորձառու և անյողդողդ մարդ և առաջնորդվում է իր առողջ և խելացի գիտակցութեամբ։

Եթէ նա լինէր ենթարկվող անձն, վաղուց նրա հակառակորդները իշխած կը լինէին նրան և իրանց ուղղութեան ետևից տարած, ուստի և կը լինէին նրա դրութեան տնօրինողը. բայց իրանք ապացուցանում են, որ այդպէս չէ։

Նրա հաստատուն կամքի ապացոյցն է նաև այն խոշոր հանգամանքը, որ նա մի անգամ ընդմիշտ փակեց «Արարատի» էջերը Երուանդի վ.-ի և նրա նմանների յօդուածների համար, որոնց բովանդակութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ խծբծանք, մեր եկեղեցական սրբազան խորհուրդների, աւանդութիւնների, սովորութեան և ծէսերի մերկացումներ։

Արդ՝ հայ գիտակից մասսան չէ կարող մոռացութեան տալ այդպիսի արժանաւոր հոգևորականի անունը և իր առողջ դատողութեամբ, վաղ թէ ուշ, պէտք է նրան տայ նրա արժանի կոչումը։

Բաղդան Բերինեան

ԵՐԿՐՈՐԴ ԱԿԱՄԱՅ ՊԱՏԱՍԽԱՆ Ա. Փ.-ԻՆ

Թիֆլիս, 1 հոկտեմբերի

«Մշակի» № 202-ում կարդացի ձեր երկրորդ յօդուածը։ Առաջ, «Մշակի» № 186-ում, ինքնավստահ պնդում էիք, որ իմ գրքերը Նորագոյն ծրագրից շեղված են։ «Մշակի» № 192-ում ձեզ պատասխանելով ապացուցեցի, որ դուք փաստերը աղաւաղում էք, այսինքն, որ դուք Նորագոյն ծրագրի երես չէք տեսել ու իմ Ա. տարվայ գիրքը ուղղակի համեմատել էք տէր-Սահակի Ա. տարվայ գրքի հետ։

Այժմ, լսելով որ իմ Ա. տարին հետզհետէ հաւանութիւն է գտնում կրօնուսոյցների շրջանում, սկսել էք ձեր երկրորդ յօդուածում շեշտել, որ ես Նորագոյն ծրագրի ոչ արտաքինն եմ ըմբռնել և ոչ ոգին։ Երևի տէր-Սահակը, որի գիրքը դուք Նորագոյն ծրագրի տեղ էիք ընդունել, աւելի լաւ պիտի ըմբռնած լինի։ Եթէ այդպէս է, ես 1910 թ. տպած ծրագրի հետ կը համեմատեմ տէր-Սահակի Ա. տարվայ գիրքը և իմ կազմած Ա. տարին, որ բարեխիղճ ընթերցողը տեսնի, թէ ինչքան արդարութիւն կայ ձեր ասածների մէջ։

Նորագոյն ծրագիր. Կրօն. Ա. տարի.

Աղօթք, Հայր մեր աշխարհաբար։

Տէր-Սահակի գրքի առաջին երեսում դըրված է Հայր մերը նախ գրաբար, ապա աշխարհաբար։ Ընթերցողը թող ասի, թէ արդեօք ուսուցանելիս հեշտից դէպի դըժուարը պիտի գնալ թէ ընդհակառակը։

Իմ գրքի մէջ աղօթքները դրված են զանազան էջերում պատմվածների բովանդակութեան համեմատ։ Հայր մերը կայ միայն աշխարհաբար, այն էլ 26-դ երեսում «12 տարեկան Յիսուսը տաճարում» գլխից յետոյ։ Ճիշդ է, Նորագոյն ծրագրում ուրիշ աղօթք չէ յիշված, բայց աչքի առաջ ունենալով մանուկների շահը, դրել եմ մի քանի աղօթքներ ու երգեր, բոլորն էլ փոքր, զուտ մանկական ու յստակ աշխարհաբարի վերածած։

Նոր ուխտից։ Նորագոյն ծրագրում յիշված են Յիսուսի կեանքից միայն 8 պատմուածքներ։ Տէր-Սահակի գրքում դրանց տեղ կան 21 հատ, իսկ իմ գրքում միայն 15։

Մանկական հէքիաթներ։ Նորագոյն ծրագիրը պահանջում է 6—10 առակներ, պատմուածքներ, որ ես անուանել եմ ամենախելացի նորութիւնը կրօնի դասընթացքի մէջ. ու իբրև առաջին փորձ գրքիս սկզբում դրել եմ 7 փոքր պատմուածքներ, որոնց տեղ երկրորդ տպագրութեան ժամանակ կը լինեն ընտիր հէքիաթներ։ Տէր-Սահակի մօտ այս բաժինն ամենևին գոյութիւն չունի, չը նայած որ նա միակ կրօնուսոյցն է եղել, որ մասնակցել է 1906 թ. նախագիծ-ծրագիրը կազմելու մէջ։

Ընթերցողն արդէն տեսնում է, թէ Ա. տարին կազմելիս ո՞վ է աւելի շեղվել Նորագոյն ծրագրից։

Այժմ, պ. Ա. Փ., գամ Բ. տարվայ գրքիս մասին արած ձեր անտեղի նկատողութեան։

«Յովսէփը Փէտափրէսի տանը» գլխում յիշել եմ դահճապետի կնոջ անհաւատարմութիւնը։ Ս. Գրքի մէջ եղածը նոյնութեամբ չեմ բերել, բայց չեմ էլ կամեցել անհաւատարմութեան փաստը ջնջել. միայն մեղմացրած ձևով եմ արտայայտել և դրա համար իմ մանկավարժութիւնը դատափետում էք։ Բայց պէտք է իմանաք, որ այդպէս վարվելով հետևած եմ միայն գերմ. ընտիր կրօնուսոյցներին, որոնցից մինն է հռչակաւոր Րիխարդ Շտաուդէն։ Չը գիտեմ ինչ կասէիք, պ. Ա. Փ., եթէ Փէտափրէսի կնոջ դէպքը գրելիս տէր-Սահակի խորհրդին հետևէի. ահա թէ ինչ է ասում նա. «Մեր կարծիքով՝ աշակերտաց ձեռք սրբազան պատմութեան մի առանձին գիրք տալն աւելորդ է. ամենալաւը և նպատակայարմար դասագիրքը Սուրբ Գիրքը՝ բնագիրն է»։ (Տես Հին Ուխտի պատ., 1887 թ.)։

Քամալեանց Ս.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Չին յեղափոխականների և կառավարական զօրքերի վճռական ճակատամարտը վերջացաւ առաջինների պարտութեամբ. յեղափոխականները կորցրին 600 սպանված։

✦ Չինական ապստամբ վայրերի հետ հեռագիրը չէ գործում, հետևապէս անկարելի է դառնում տեղեկութիւններ ստանալ յեղափոխական դրութեան մանրամասնութիւնների մասին։

✦ Եւրոպական մեծ պետութիւնները վախենալով իրանց հպատակների վտանգաւոր դրութիւնից, չինական ջրերն են ուղարկել մի քանի պատերազմական նաւեր։

✦ Եւրոպայում սենսացիօն լուր է տարածված, որ իբր թէ Ռուսաստանը և Ճապոնիան պայմանաւորվել են բաժանել Մանջուրիան իրար միջև։

✦ Գերմանիան ուժեղացնում է իր ցամաքային զօրքերը Չինաստանում և մտադիր է աջակցել կառավարութեան։

✦ Պէկինում պաշտօնապէս յայտարարվեց կառավարութեան ունեցած հսկայական յաղթութեան մասին։

✦ Թիւրքաց նաւատորմը դիմեց Դարդանէլ, ըստ երևոյթին Արշիպելագոսում գտնվող իտալական նաւատորմին դիմադրելու համար։

✦ Տրիպօլիսում 8000 արաբներ միացել են թիւրքերին։

✦ Չինական վերջին կռւում մեծ չափով փնասվել են գերմանացիները Խանկօույում։

✦ Լուրերի համաձայն, թիւրքերի երկրորդ զօրաբանակը հաշտութեան դէպքում արշաւելու է դէպի մայրաքաղաք՝ Կ. Պոլիս։

✦ Իտալիան ուժեղացնում է իր ծովային ռազմի ուժերը։ Նա տուել է դրէդնօուտներ կառուցանելու պատուէրներ։

✦ Պետերբուրգում խօսում են, որ Դուրնովօն Ղրիմ է կանչված։

✦ Ռուսաց սինօդը վերստին վերամշակելու է հոգևոր-կրթական հաստատութիւնների բարենորոգումը։

✦ Գերմանիայի և Ֆրանսիայի բանակցութիւնները Մարոկկօյի վերաբերմամբ աւարտվեցին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

10 հոկտեմբերի

ԲԱԳՈՒ։ Նահանգապետի նախագահութեամբ և Դումայի անդամներ Հէյդարովի և Տիմօշկինի մասնակցութեամբ կայացաւ խորհրդակցութիւն ձկնորսութեան առիթով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վերադարձաւ Կրիվօշէինը։

«Рус. Знамя»-ի խմբագիր Դուբրօվինը ենթարկվում է պատասխանատուութեան 1024-րդ յօդուածով։

Անդրբայկալեան շրջանը ճանաչվում է ժանտախտից վտանգաւոր։

Նոր նախագծով կանօնաւորվում է ջրից օգտվելու եղանակը Թուրքեստանում. հնարաւորութիւն է տրվում բամբակագործութեան զարգացմանը։

ԼՕՆԴՕՆ։ Փոթորկի ժամանակ Սուսէքսի մօտերը խորտակվեցին 60 նաւակ։

ՕԴԵՍՍԱ։ Երևան հանվեց ժանտախտի 4-րդ դէպք։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Եկաւ ծովային մինիստրը։

ՎԱՐՇԱՎԱ։ Հացթուխների լեհական պրոֆեսիօնալ միութեան շինութիւնը ներս խուժեցին մի քանի զինված մարդ, որոնք սպանեցին երեք հացթուխների, վիրաւորեցին երկուսին և փախան։

ՄՕՍԿՎԱ։ «У. Р.»-ի խմբագիրը պատասխանատուութեան է ենթարկվում հոկտ. 11-ի համարում «Трупъ» ֆէլիէտօնը տպելու համար։

ՊՐԱԳԱ։ Ընկնելով 20 մետր բարձրութիւնից՝ ծանր վիրաւորվեց կին-օդագնաց չեխուհի Լազլէրօվը։ Գործիքը ջարդվեց։

Արևելեան Չեխիայում մանուֆակտուրային բայկոնում գործադուլը տարածվում է։

ԿՐԱԿՕՎ։ Վախճանվեց նախկին ռուսասէր ազդեցիկ լեհ պատգամաւոր Ստոեալովսկին։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ս. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեամինովսկայա փողոց, № 8.
(Կ. Հ.) 416. 100—44

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տէլէֆօն 388.
(Հ.ու.Կ.) 761. 100—27

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Մ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ
վերադարձել է հիւանդն. ընդունել. ատամների և բերանի խոռոչի վերքեր.: Տեխնիկ. աշխատանքների համար հրաւիրված է արտասահմանից ատամնաբոյժ-տեխնիկ. Ընդունելութիւնը՝ առաւ. ժամը 10—2, երեկ. ժամը 4—6, կիրակի օրերը ժամը 10—12-ը.
Միխայլովսկի պր. № 43.
(օ.մ.) 956. 10—6

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(ա. օ.) 669. 100—42

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

5—10 րուբլի ամեն օր
կարող է աշխատել իւրաքանչ. գործունեայ անձն՝ որ ունի մի քանի ժամ ազատ ժամանակ։
Միանգամայն սօլիդ առաջարկ!
Բոլոր մանրամասնութիւնները ձրի և ֆրանկօ, հետևաբար առանց մարկի։ Հասցէն՝ Л. ШАБЕРТЪ,
Отд. 2, Москва. Маросейка, д. Хвощинскаго.
(Կ.5,12) (M. 334341) 938. 3—3

Լոյս տեսաւ
ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆ
ԴԱՍԱԳԻՐՔ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Մաս Ա.
ՄԱՐԴ և ԿԵՆԴԱՆԻ
(Կենսաբանական ուղղութեամբ)
Երկրորդ բարեփոխված տպագրութիւն
Գինը 60 կոպ.
Պահեստը «ԳԻՐ» գրավաճառանոցում։
Դիմել՝ Тифлисъ. Книж. магаз. «ГИРЪ».
(Հ.Հ.) 992. 2—1

Լոյս տեսաւ
ԿԱՐ. ՄԻՐԻԱՆԵԱՆ և ԱՇ. ԹՈՒՄԱՆԵԱՆ
Դասագիրք պատմութեան
Մաս Ա.
(Քաղաքակրթութեան տարերքը և հայկական աւանդութիւններ)։
55 նկարով եւ 1 քարտէզով
Գինն է 50 կոպ.
Երկրորդ բարեփոխված տպագրութիւն
(Դասընթաց III բաժանմունքի նոր ծրագրի համաձայն)։
Պահեստը «ԳԻՐ» գրավաճառանոցում։
Պատրաստվում է Բ. մասն.
(ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԱԳԱԹՆԱԿԵՏԵՐԸ)
Դիմել՝ Тифлисъ. Книж. магаз. «ГИРЪ».
(Հ.Կ.) 991. 2-1

«ՄՇԱԿԻ» խմբագրատանը վաճառվում է
ՅՈՒՇԱՐՁԱՆ
ՈՂԲԱՑԵԱԼ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆԻ
(մահարձանի բացման առթիւ)
ԳԻՆՆ Է՝ Թիֆլիսում 40 կոպ., Թիֆլիսից դուրս՝ ճանապարհածախսով 50 կ.:
Գումարով գնողներին զեղչ 20%.
Դիմել՝ Тифлисъ, ред. газ. «Мшакъ».
987. 10—2

Մի հայ օրիորդ
որ աւարտել է գեղարուեստի և նկարչութեան, այլ և կար ու ձևի, շքեղ ձեռագործի և հաշւապահական դասընթացքներ, որոնում է յարմար ՊԱՇՏՕՆ դաստիարակչուհու (մասնաւոր տներում և դպրոցներում) կամ հաշւապահուհու և գանձապահուհու։ Ունի անհրաժեշտ վկայագրեր և յանձնարարականներ։ Կարող է գնալ նաև քաղաքից դուրս։ Դիմել «Մշակի» խմբագրատուն՝ Ցար. Գասպարեանին։
(օ. մ.) 977. 3—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.